

## ԳՈՆ ՏԱՆԻՆՈՎԻԶԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հինգշաբթի, Մայիս 2-ին «Ճին Օթրի» թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում Միացեալ Նահանգներու կառավարութեան «Հազարամեակի Մարտահրաշխ» ծրագրի տնօրէն Ճոն Տանիլովիչի եւ Լուս Անճելլասայ համայնքի կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն միջեւ:

Գոնկրէսական Ատամ Շիֆի նախաձեռնութեամբ տեղի ունեցած սոյն հանդիպումի ընթացքին Պր. Տանիլովիչ բացատրութիւններ տուաւ Մրագրի շրջագիծէն ներս Հայաստանին յատկացուած 235 միլիոն տոլարի օժանդակութեան գծով ցարդ կատարուած աշխատանքներու մասին, որոնց նպատակը է գիւղական շրջաններու զարգացումը եւ աղքատութեան վերացումը:

Նկատելով որ, «Հազարամեակի Մարտահրաշխ» ծրագրի կապուած է օժանդակութիւն ստացող երկիրներու մէջ ժողովրդավարութեան զարգացման հետ, Ճոն Տանիլովիչ մտահոգութիւն յայտնեց Հայաստանի մէջ վերջին շրջանին տեղի ունեցած զարգացումներուն կապակցութեամբ: Ան յոյս յայտնեց, որ իշխանութիւնները կը վերադառնան ժողովրդավարական սկզբունքներուն ու կը երկրէն ներս կը վերականգնեն քաղաքական ազատութիւնները:

Ճոն Տանիլովիչ պատասխանեց նաեւ ներկաներու շարք մը հարցերուն:

ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի կողմէ հանդիպումին ներկայ էին Վազգէն Խոտանեան եւ Փիթըր Տարաքճեան:

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԵՑ ՍՏԵՂԾԵԼ «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵՍ»

Մայիս 2-ին Հայաստանի կառավարութեան նիստերու լեզուներու դահլիճէն ներս գումարուեցաւ համաժողովրդական շարժման երկրորդ գոնկրէսը մասնակցութեամբ անդամ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն: Լեցուն էր ոչ միայն դահլիճը, այլեւ շէնքի միջանցքները, ուր գետեղուած պատաստներու միջոցով հնարաւորութիւն կը տրուէր հետեւելու ներսը կատարուող իրադարձութիւններուն:

Քաղաքացիներու մէկ մասը կանգնած էր շէնքի դիմացի հատուածը գտնուող Հայաստանի հանրապետական կուսակցութեան գրասենեակի աստիճաններուն վրայ, որպէսզի աչքտեղէն աւելի լաւ երեւայ, թէ ինչ կը կատարուի երկրորդ հարկը: Դուրսը հաւաքուածներուն կը հակէին ոստիկաններ: Գոնկրէսի մասնակիցները յոտնկայս ու անդադար ծափերով դիմաւորեցին առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, որ յատուկ մօտեցաւ գոնկրէսի երիտասարդ պատուիրակներուն, ողջունեց անոնց, ապա քաղաքական բանտարկեալներու կանանց եւ վանաձորցի ազատամարտիկ Արշալիր Բոգինեանին, որ ի պաշտպանութիւն ԱԺ պատգամաւոր Սասուն Միքայէլեանի մի քանի անգամ երկարատեւ հացադուլ կատարած էր:

«Լեւոն-նախագահ» վանկարկումներու ներքոյ առաջին նախագահը գրաւեց իր տեղը:

Ելոյթ ունեցան առաջին նախագահին սատարող գրեթէ բոլոր ուժերու ներկայացուցիչները, որոնց շարքին ՀԺԿ առաջնորդ Ստեփան



Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Գոնկրէսի մասնակից երիտասարդները բռուցցնեցին վեր

Դեմիրճեան, «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեան, ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեան, «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Վարդան Խաչատրեան, ՆԺԿ փոխնախագահ Հրաչեայ Սարգսեան, որ գոնկրէսը ողջունեց բանտը գտնուող Արամ Կարապետեանի անունով, ՀՀՇ ձերբակալուած առաջնորդի փոխարէն ելոյթ ունեցաւ վարչու-

թեան անդամ Աշոտ Սարգսեան, Մարքսիստական կուսակցութեան նախագահ Դաւիթ Յակոբեան եւ ուրիշներ:

Վերջինը ելոյթ ունեցաւ Լեւոն Տէր-Պետրոսեան, որ իր ծաւալուն խօսքին մէջ կոչ ըրաւ Սերժ Սարգսեանին ապահովել Մարտ 1-ի ոճրագործութեան

Շարք էջ 4

## ԴԱՇՏԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՆԱԽԿԻՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ

«Հայաստանում շարունակուած են ոտնահարուել մարդու իրաւունքները: Մարդիկ բերման են ենթարկուած, հետապնդուած ու ձերբակալուած անհիմն մեղադրանքներով, ինչը ստեղծուած է անհանդուրժողականութեան եւ անվստահութեան մթնոլորտ: Հետապնդուած են մարդիկ, ովքեր անտարբեր չեն երկրի եւ ժողովրդի համար», - ըստած է Դաշտային հրամանատարներու խորհուրդի յայտարարութեան մէջ, որ Մայիս 6-ին լրագրողներուն ներկայացուց խորհուրդի համակարգող, «Արցախ» գունդի նախկին հրամանատար Միքայէլ Ապրեսեան:

«Այսպիսի իրականութեան մէջ մեր երկիրը չի կարող զարգանալ բնականոն հունով: Աւելին՝ կարող ենք կորցնել այն, ինչ մենք ձեռք ենք բերել ծանր կորուստների գնով: Սա կործանման տանող ճանապարհ է, ուստի մենք պահանջում ենք ազատ արձակել

մեր մարտական ընկերներին եւ բոլոր քաղաքացիներին», - ըստած է յայտարարութեան մէջ:

Ղարաբաղի պաշտպանութեան բանակի առաջին հրամանատար Արկաղի Կարապետեան, խօսելով նախկին ազատամարտիկներու ձերբակալութիւններու մասին, ըսաւ. - «Ես չեմ պատկերացնում, որ իմ մարտական ընկեր Սասուն Միքայէլեանը կարող էր մեր պետականութեան դէմ ինչ-որ ոտնձգութիւն անել: Այդ մարդը վիրաւորուել է, արիւն է թափել այդ պետականութեան համար»:

Միքայէլ Ապրեսեանի պնդումով, Մարտի 1-ին Ազատութեան Հրապարակը գտնուած ազատամարտիկներու մօտ գէնք չէ եղած:

«Իշխանութիւնները շատ հմուտ, շատ մեծ ծախսերով, ինտրիգային բնոյթ կրող օպերացիա էին մշակել, որը բերեց այս վախճանին», - աւելցուց ան:

## Ս.Դ. ՀԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հայրենակիցներ՝ Փետրուարի 19-ին գործող ռեժիմը հերթական անգամ կեղծեց ընտրութիւնները՝ իրեն իրաւունք վերապահելով որոշել մի ամբողջ ազգի ճակատագիրը: Բռնութիւններով, լցոնումներով ուղեկցուող «ընտրութեան» արդիւնքում Հայաստանի Ազատ քաղաքացիներ ընդվզեց եւ յայտարարեց, որ այլեւս չի պատրաստուած ապրել այս անբարոյ կեանքով, որ չի պատրաստուած սեփական երկրում ստրուկի կարգավիճակ ունենալ: Սակայն ռեժիմն իրեն յատուկ դաժանութեամբ փորձեց լուծել Ազատ քաղաքացու Ձայնը՝ նրա դէմ գէնք կիրառելով, խոշտանգելով եւ ձերբակալելով: Հայ ժողովրդի հերոս որդիները յայտնուեցին ճաղերից այն կողմ՝ քաղաքատարկելի կարգավիճակով, հիւանդանոցները լցուեցին բազմաթիւ վիրաւորներով, երկրում խրախուսուեց ոստիկանական ամենաթողութիւնը: Համաժողովրդական Շարժումը, սակայն, չընկրկեց՝ շատ արագ ուշքի եկաւ դաւադիր հարուածներից եւ նորից պարզեց ազատութեան ու արդարութեան համար մղուող պայքարի աննկուն դրօշը: Յաւօք, մեր ժողովրդի գիտակից մի հատուած՝

վերջնականապէս լուսալքուած ռեժիմի շարագործութիւններից, պատրաստուած է վերցնել պանդխտութեան ցուպն ու հեռանալ Հայրենիքից մի պարզ պատճառով, որպէսզի ազատուի այն դժոխային պայմաններից, որոնք իր համար ստեղծել են «ազգընտիր» ղեկավարները՝ ոչ մի յոյս չկապելով ապագայի հետ: Այս ամէնին նաեւ յաջորդեց սեփական ժողովրդից օտարուած իշխանաւորների յաջորդ քայլը՝ սկսեցին բարձրանալ ապրանքների եւ ծառայութիւնների գները, հարկային ծառայութիւնները փորձեցին խեղդել մանր ու միջին բիզնեսը՝ պետութեան, առանց այդ էլ ողբալի վիճակում գտնուող բիւջէն լցնելու համար: Այսօր մեր օղանաւակայանը լի է երկիրը լքել ցանկացողներով:

Միւրեւի հայրենակիցներ. մի՛ լքէք մեր երկիրը, մի թողէք մեր տառապած հայրենիքը օրհասական պահին, քանի որ հայ ժողովրդի նպատակը ոչ միայն արդարութիւն եւ օրինականութիւն վերականգնելն է, այլ նաեւ մեր տարագիր հայրենակիցների հայրենադարձութիւնն ապահովելը: Այս հողն ու

Շարք էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՐԲ ՀԱՅՆ ՈՒ ՏԵՍԱՐԱՆՆ ԷԼ ԱՐԴԵՆ ԶԵՆ ԼՈՒԾՈՒՄ ԽՆԴԻՐԸ

Ժողովրդին հացով կամ տե- սարանով կերակրելու մասին կա- ռավարման սկզբունքը թէեւ շատ հին է, այդուամենայնիւ այն իր վրայ չի կրում ժամանակի փոշին եւ պահպանել է իր իմաստային պարզութիւնը նոյնիսկ այն կառա- վարման համակարգերի համար, որոնք հիմնուած չեն գիտելիքի եւ ինտելեկտի վրայ եւ նոր են միայն խօսում դրանց վրայ հիմնուելու մասին, ինչպէս օրինակ Հայաստա- նը: Հայաստանի այսպէս կոչուած նոր իշխանութիւնը կանգնած է հենց այդ դիլեմայի առաջ՝ հաց կամ տեսարաններ ժողովրդին: Այ- սինքն, կամ ժողովրդին հաց եւ տալիս, որպէսզի գապես նրա սոց- իալական դժգոհութիւնը, կամ էլ եթէ չեն կարող հացով կերակրել ժողովրդին, ապա նրան շեղում եւ տեսարաններով, որպէսզի նա կլան- ուած հետեւի դրանց ու մոռանայ հացի մասին, ինչպէս երեխաները:

որպէսզի իւրաջինները չգրաւեն տնտեսութեան բոլոր ոլորտները, միւսներին թողնելով միայն տնտե- սութեան ոսկորները:

Թուում է, թէ առաջիկայում, ելնելով այդ իրողութիւնից, հացի խնդիրը լուծելը վեր է լինելու իշխանութեան ուժից: Ներկայում, չունենալով հանրային վստահու- թիւն, իշխանութիւնը չի կարող ուսկի դիմել եւ կորցնել նաեւ իր իւրաջինների վստահութիւնը: Բայց այդ նոյն խնդիրը առաջանում է նաեւ տեսարանների պարագայում: Ժողովրդին դրանցով կերակրելու համար էլ անհրաժեշտ է նեղութիւն տալ իւրաջիններին, ընդ որում լաւ նեղութիւն տալ, որովհետեւ ի տար- բերութիւն իշխանութեան, հասարակութեան ինտելեկտն ու գիտե- լիքը բաւարարում են հասկանալու համար, որ օրինակ Արաբկերի կազմաստրի ստորաբաժանման ինչ որ աշխատակիցների ձերբակալելն ու նրանց դէմ քրէական գործ յարուցելը ամենեւին չի նշանա- կում, որ իշխանութիւնը խիստ պայքարէ սկսել կոռուպցիայի դէմ: Հասարակութեան գիտելիքն ու ինտելեկտը թոյլ են տալիս աւելի լաւ պատկերացնել Հանրապետու- թեան պետական կառավարման հա-

17, ԲԱՅՑ ՈՉ ԸԵՂԻՆԱԿԱՒՈՐ

Մայիսի 3-ի՝ Մամուլի մի- ջազգային օրուայ առթիւ մօտ 10 հոգի ինձ տուել են միեւնոյն բո- վանդակութեան հարցը՝ «Հայաս- տանում կա՞ ազատ մամուլ»: Այդ հարցերին կարելի է կամ շատ պարզունակ պատասխան տալ, կամ էլ ընկնել փիլիսոփայական թաւու- տը՝ պարզելու համար, թէ ինչ է իրականում ազատութիւնը: Այդ՝ երկրորդ տեսանկիւնից, լիակա- տար ազատ լրատուամիջոց աշ- խարհիս երեսին, հաւանաբար, չկայ, քանի որ չկայ կատարելապէս ազատ բիզնես: Ամենազարգացած եւ ամե- նաժողովրդավարական երկրում ԶԼՄ-ների նիւթական վիճակը կախ- ուած է ոչ միայն լրագրական նյութերի որակից, այլեւ տուեալ լրատուամիջոցից դուրս գտնուող գործօններից (մասնաւորապէս՝ գո- վազդից), իսկ դա չի կարող չսահ- մանափակել տուեալ թերթի կամ հեռուստաընկերութեան ազատու- թիւնը:

թիւնը մեզ չի հետաքրքրում», նրանք, մեղմ ասած, անկեղծ չեն. ամէն քայլափոխի նրանք գնում են քայլերի, որոնք հակասում են իրենց բիզնես-շահերին, միայն թէ ար- ժանանան իշխանաւորների բարե- հաճութեանը: Օրինակ, նախընտ- րական արշաւի ժամանակ փակում են քաղաքական թոք-շոունները՝ չնայած ակնյայտ է, որ այդ ժամա- նակահատուածում դրանք կունե- նան ամենաբարձր վարկանիշը եւ, հետեւաբար, կարող են գրաւել բազմաթիւ եւ «թանկարժէք» գո- վազդատուների: Կամ հրաժարում են վճարովի հիմունքներով հե- ուարձակել ընդդիմութեան տրա- մադրած նիւթերը: Ոչ, բարեկամ- ներ, դուք բիզնեսմէններ չէք, դուք իշխանութեան թոյլտուութեամբ գոյութիւն ունեցող «կանտորանե- ռի» աշխատակիցներ էք:

Բայց Հայաստանի (Ատրպէյ- ճանի, Թուրքմենստանի, Բելառու- սի) մամուլը բախում է բոլորովին այլ տեսակի սահմանափակումնե- րի. այստեղ իշխանութիւնը լծակ- ներ ունի կառավարելու լրատուա- միջոցները եւ թոյլ չտալու այն տեղեկատուութեան հրապարակու- մը, որն իր համար ցանկալի չէ: Մեր երկրի դէպքում այդպէս է վերահսկում հիմնականում հե- ոուստաթերթը, որի սպառողները 100 հազարաւոր մարդիկ են՝ ի տարբերութիւն թերթերի եւ ին- տերնետի, որոնք, եթէ բոլորը գու- մարենք, ընթերցում են տասնեակ հազարաւոր քաղաքացիներ, եւ որոնք այդ իսկ պատճառով աւելի թոյլ են վերահսկում: Երբ մեր հեռուստաընկերութիւնների տէրե- րը յայտարարում են՝ «մենք գոր- ծարարներ ենք, քաղաքականու-

Լուծումը, ճիշդն ասած, եւ տեսնում եմ «վերելից»: Այս կամ յաջորդ, կամ «յաջորդի յաջորդ» իշխանութիւնը պէտք է լինի այն- քան լայնախոհ, ազատամիտ եւ հանդուրժող, որ ի վիճակի լինի «բաց թողնել» հեռուստաթերթը: Կարելի է սկսել «Հ1»-ից, քանի որ այն, ըստ օրէնքի, կապ ունի իշխա- նական կառուցների հետ. եթէ մի հեռուստաընկերութիւն լինի ազատ (եւ, հետեւաբար, հեղինակաւոր), ապա միւսները, շարունակելով հին ոճով, պարզապէս կը կորցնեն հեռուստադիտողին եւ, այդ վտան- գը հաշուի առնելով, ի վերջոյ, ստիպուած կը լինեն վերափոխ- ուել: Բայց իշխանութիւնը (գոնէ առայժմ) զերադասում է ունենալ 17 ոչ հեղինակաւոր հեռուստաըն- կերութիւն: Հենց այդ նպատակով էլ փակուել է «Ա1+»-ը:

Կամ ժողովրդին հաց եւ տալիս, որպէսզի գապես նրա սոցիալական դժգոհութիւնը, կամ էլ եթէ չեն կարող հացով կերակրել ժողովրդին, ապա նրան շեղում եւ տեսարան- ներով, որպէսզի նա կլանուած հետեւի դրանց ու մոռանայ հացի մասին

պրոցեսը դեռ շարունակուել է, ինչը չի թաքցնում նոյնիսկ իշխա- նութիւնը: Այդ խնդիրը սակայն այդուամենայնիւ հնարաւոր կը լի- նէր լուծել, եթէ իշխանութիւնը կարողանար որոշակիօրէն նեղել իր իւրաջին օլիգարխներին եւ օլի- գարխակերպ պաշտօնեաներին: Սա- կայն դա թերեւս անլուծելի խնդիր է, որը յատուկ է բոլոր այն պետա- կան կառավարման համակարգե- րին, որոնք ձեւաւորում են եւ գործում ոչ թէ պետական օրէնքի, այլ պայմանաւորուածութիւնների հիման վրայ: Բանն այն է, որ այդ պայմանաւորուածութիւնների շրջանակում «նեղուել» հասկա- ցութիւնը տեղ չունի: Այսինքն, թերեւս հենց այդ հասկացութիւնը բացառելու համար է, որ շրջանց- ւում է օրէնքը, եւ համակարգը հիմնում է պայմանաւորուածու- թիւնների վրայ: Հետեւաբար, հա- մակարգի մասնակիցները նեղում են «նեղուել» հասկացութիւնից: Մինչդեռ հացի խնդիրը լուծելու համար իշխանութիւնը ստիպուած է նեղել իւրաջիններին ոչ միայն հարկերով ու մաքսատուրքերով: Դրանք ընդամենը ֆիսկալ խնդիր են լուծում, ապահովելով պիւտճէի վարձատրուող խաւի բարեկեցու- թիւնը: Մինչդեռ Հայաստանի բնակչութեան գերակշիռ մեծա- մասնութիւնը պիւտճէին տալիս է, բայց չի ստանում:

Դա նշանակում է իշխանու- թիւնը պէտք է իւրաջին օլիգարխ- ներին եւ օլիգարխակերպ պաշտօն- եաներին ստիպի, որ նրանք յարգեն աշխատանքային օրէնսգրքի կա- նոնները, նորմալ վարձատրեն աշ- խատողներին, նաեւ ապահովի հա- ւասար մրցակցային պայմաններ,

մակարգում կոռուպցիայի կառուց- ուածքը, եւ հասկանալ, որ եթէ ստորաբաժանումներում կո- ռուպցիա կայ, ապա դա ոչ թէ պատճառ է, այլ ընդամենը հետե- ւանք: Հետեւանք այն իրողութիւն- ների, որ առկայ են աւելի բարձր ատեաններում:

Բայց հացի ու տեսարանների դիլեման, իշխանութեան համար իր գրեթէ անլուծելիութեամբ, ման- րուք է այն խնդրի համեմատ, որ իշխանութեան համար առաջ է բերում մեր հասարակութեան, շա- տերի գնահատմամբ մի գուցէ փոքր, բայց բաւական ակտիւ մի խաւ, որի զգալի մասը կազմում են երիտասարդները: Խօսքը իրաւուն- քի ու ազատութեան համար պայ- քար մղող խաւի մասին է, որը ձեւաւորուել է նախագահի ընտ- րութիւնից յետոյ եւ բիւրեղացաւ Մարտի 1-ի ողբերգութիւնից յե- տոյ: Խնդիրն իշխանութեան հա- մար այն է, որ այդ խաւը հաց եւ տեսարաններ չէ, որ ուզում է, այլ իրաւունք եւ ազատութիւն: Այդ խաւի համար հեղինակութիւնն իրա- ւունքն է, իսկ հպարտութիւնը՝ ազատութիւնը, ինչն անհնար է դարձնում նրանց մեր ազգային քարոզչական խոհանոցի հիմնա- կան բլիւզով՝ հերոսներով ու հերոսամարտերով, հազարամեայ մշակոյթով եւ միասնականու- թեամբ, արտաքին թշնամիներով ու համաշխարհային դաւադրու- թեամբ կերակրելը, քանի որ ի տարբերութիւն իշխանութեան, այդ խաւի ինտելեկտուալ եւ տեղեկատ- ուական ռեսուրսը բաւականաց- նում է այդ ամէնի իրական արժէքը հասկանալու, եւ Հայաստանի պե- տութեանն ու քաղաքացիներին

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջամի

ԽՍԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ՊԱՋԱՆԵԱՆ  
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ՍԱՅԱԿ ՌՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Գեո. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).

All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

# ՐԱՅԱՍԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ «ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐԺՈՒԵԼ Է

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Նախագահ Սերժ Սարգսեանը մերժեց է «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջարկը, որ կուսակցութեան ղեկավար Բաֆֆի Յովհաննիսեանի փոխարէն Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկները իրագործման համար ստեղծուած աշխատանքային խմբում ներկայացուած լինի կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան անդամ Ստեփան Սաֆարեանը: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Անահիտ Բախշեանը:

«Իրենք սրանով հետեւեալ մասին յայտարարեցին՝ որ քաղաքական դաշտի դերակատարները մէջ ընդդիմութիւնը չկայ», - ասաց Անահիտ Բախշեանը: - «Մերժման պատճառը չենք կարողանում ընկալել: Դա կը լինէր քայլ դէպի երկխօսութիւն»:

Իշխող կոալիցիայի անդամ 4 կուսակցութիւնները հրապարակած յայտարարութիւնում ամփոսանք են յայտնում, որ Բաֆֆի Յովհաննիսեանը հրաժարուել է մասնակցել աշխատանքային խմբի աշխատանքին: «Ժառանգութիւն»-

ուժ նշում են, որ իրենց առաջնորդը հրաժարուել է մասնակցել աշխատանքային խմբի հաւաքներին, որովհետեւ այս օրերին Հայաստանում չէր լինելու:

«Քայլերը, որոնք արոււմ են իշխանութիւնների կողմից իբրեւ թէ ԵՆԽՎ-ի թիւ 1609 բանաձեւը իրականացնելու, իսկապէս իմիտացիա է: Մինչ այսօր որեւէ լուրջ քայլ՝ հասարակութեանը ցոյց տալու համար, որ իրենք պատրաստ են մեր երկրում ժողովրդավարական արժէքները ներդնելու, իսկապէս բացակայում է», - պնդեց Անահիտ Բախշեանը:

Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախագահ, դաշնակցական Արմէն Ռուստամեանը, սակայն, ով նոյնպէս ընդգրկուած է աշխատանքային այդ խմբում, որպէս մերժման պատճառ մատնանշեց այն փաստը, որ Ստեփան Սաֆարեանը ԵՆԽՎ-ում հայաստանեան պատուիրակութեան անդամ չէ, իսկ աշխատանքային խմբում ընդգրկուած են միայն այն պատգամաւորները, ովքեր աշխատում են նաեւ ԵՆԽՎ-ում Հայաստանի պատուիրակութեան կազմում:

## ԿՈՒՄՍՈՒՄԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:  
Կոալիցիայի անդամ 4 կուսակցութիւնները յայտարարել են, թէ պատրաստ են իրականացնել բարեփոխումներ, որոնք կը նպաստեն Հայաստանում «կայուն ժողովրդավարական հաստատութիւնների զարգացմանը եւ օրէնքի գերակայութեան ապահովմանը»:

Յայտարարութեան մէջ ասուած է, որ այդ բարեփոխումները վերաբերում են «քաղաքական համակարգում ընդդիմութեան գործունէութեան հնարաւորութիւնների ընդլայնմանը, ընտրական գործընթացների նկատմամբ հանրութեան վստահութեան հակաբարձրացմանը, խօսքի ազատութեան եւ զանգուածային լրատուամիջոցների գործունէութեան անկախութեան ամրապնդմանը, դատական համակարգի լիարժէք համապատասխանեցմանը եւրոպական չափանիշներին»:

«Եւրոպական չափորոշիչներին համապատասխան՝ ընդդիմութեան իրաւունքների ամրագրումը պէտք է զուգակցուի քաղաքական դաշտի

բոլոր դերակատարների քաղաքական պատասխանատուութեան յստակեցմամբ, մամուլի ազատութիւնը՝ մասնագիտական էթիկայի կանոնների սահմանմամբ եւ իրաւական պարտաւորութիւններով, ցոյցեր եւ երթեր անցկացնելու իրաւունքը՝ օրինապահութեան, այլ քաղաքացիների իրաւունքների, ազատութիւնների ու երկրի անվտանգութեան ապահովմամբ», - նշուած է յայտարարութեան մէջ, որը ստորագրել են Հանրապետական կուսակցութիւնը, «Բարգաւաճ Հայաստան»-ը, Դաշնակցութիւնը եւ «Օրինաց Երկիր»-ը:

Կոալիցիան նաեւ երկխօսութեան կոչ է արել բոլոր քաղաքական ուժերին, կարեւորել է Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկութիւնների իրագործման նպատակով աշխատանքային խմբի ստեղծումը եւ ամփոսանք է յայտնել, որ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Բաֆֆի Յովհաննիսեանը հրաժարուել է մասնակցել խմբի աշխատանքին:

## ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐՆ ԵՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի ֆինանսների նախարարութիւնը հրապարակել է 2008 թուականի առաջին եռամսեակի հաշուետուութիւնը, որի համաձայն հարկային եկամուտները կազմել են 123 միլիարդ դրամ, ինչը աւելի քան 33 տոկոսով գերազանցում է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի ցուցանիշը:

Անկախ տնտեսագէտ Էդուարդ Աղաջանովը, սակայն, ուշադրութիւն է հրաւիրում այդ հարկերի կառուցուածքին՝ նշելով, որ այդտեղ կէսից աւելին (52 տոկոսը) աւելացուած արժէքի հարկն է:

«Աւելացուած արժէքի հարկը, որը գնի մէջ է մտնում, վճարում է սպառողը», - լրագրողների հետ հանդիպմանը ասաց Աղաջանովը: - «Հայաստանի բնակչութիւնը հաց գնելիս պետութեանը որպէս աւելացուած արժէքի հարկ աւելի շատ փող է մուծում, քան Հայաստանի ամբողջ բիզնեսները միասին վերցրած՝ շահութահարկ: Սա է աբսուրդը»:

11 տարի առաջ, ըստ նախկին վիճակագրութեան նախարար Աղաջանովի, աւելացուած արժէքի հարկը կազմում են հարկերի ընդամէնը:

Նր 30 տոկոսը, իսկ ուղղակի հարկերը՝ շահութահարկը, եկամտահարկը, տոկոսային շարաքերութեամբ աւելի շատ էին, քան այսօր: Անդրադառնալով պաշտօնական մէկ այլ տուեալի, թէ խոշոր հարկատուները վճարում են Հայաստանի հարկային եկամուտների մեծ մասը՝ Էդուարդ Աղաջանովը պնդեց. - «Դա սուտ է: Թուերով ճիշդ է, բայց որ նայում ես մուծած հարկերի կառուցուածքը, տեսնում ես, որ նա չի մուծել, սպառողն է մուծել»: Նրա խօսքով, խոշոր հարկատուների վճարած հարկերի մեծ մասը դարձեալ անուղղակի հարկերն են՝ աւելացուած արժէքի հարկը, սկզբիցային հարկը:

Անկախ տնտեսագէտը նաեւ թերահաւատօրէն է վերաբերում հարկային վարչարարութիւնը բարելաւելու մասին կառավարութեան յայտարարութիւններին, քանի որ, ըստ նրա, հարկային վարչարարութիւնն ասելով, կառավարութիւնը նկատի ունի հիմնականում հարկերի հաւաքումը: Մինչդեռ, իր կարծիքով, առաջնայինը հարկման այնպիսի ռեժիմներ ստեղծելն է, որ տնտեսավարող սուբեկտը ինքը ստուերից դուրս գայ:

## ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Նախագահ Սերժ Սարգսեանը հրամանագիր է ստորագրել Արթուր Բաղդասարեանին Ազգային Անվտանգութեան խորհրդի քարտուղար նշանակելու մասին:

Նախագահի մամուլը գրասենեակի փոխանցմամբ՝ Սերժ Սարգսեանի Մայիսի 4-ի մէկ այլ հրամանագրով հաստատուել է Ազգային Անվտանգութեան խորհրդի կազմը, եւ խորհրդի քարտուղարին յանձնարարուել է մէկամսեայ ժամկէտում նախագահի հաստատմանը ներկայացնել խորհրդի կանոնադրութիւնը:

Ազգային Անվտանգութեան խորհրդի կազմում ընդգրկուած են՝ հանրապետութեան նախագահը, Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, Սահմանադրական

## ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆԵԱՆ. «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՆԻՎ-Ի ԲԱՆԱԶԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՂՈՒԹԵԱՄՐ ՈՐԵԻ ՔԱՅԼ ՉԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի իշխանութիւնները Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձեւի կատարման ուղղութեամբ որեւէ քայլ չեն կատարում: Այդ մասին այսօր «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում յայտարարեց Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գրասենեակի մամուլի խօսնակ Արման Մուսինեանը:

«Քաղաքատարկեալների մասով, ոչ միայն չեն կատարուում, այլ նաեւ ապրիլի 17-ից, եթէ ուզում ենք որպէս սկիզբ վերցնենք ԵՆԽՎ-ի բանաձեւը, դրանից յետոյ շարունակում են ոստիկանութիւնը եւ իրաւապահ մարմինները ոչ միայն բերման ենթարկել, առանց ծանուցագրերի գրոյցների հրաւիրել քաղաքացիներին, այլ նաեւ շարունակում են ձերբակալութիւնները», - ասաց Մուսինեանը:

Մասնաւորապէս, ըստ նրա, Ապրիլի 29-ին Արտաշատում ձերբակալուել է այդ քաղաքի բնակիչ Աշոտ Կարապետեանը, որին ոստի-

կանները սպառնացել եւ ծեծի են ենթարկել՝ ստիպելով ցուցմունքներ տալ, այդ ցուցմունքների հիմքով Մայիսի 1-ին ոստիկանութեան Արտաշատի բաժին են բերել Տափերական գիւղի բնակիչ Յովակիմ Գեորգեանին, նոյն գիւղի բնակչուհի Քնարիկ Գեորգեանին, ձերբակալուել է Թալինի շրջանում ընդդիմութեան ակտիւիստներից Լենդրուշ Տոնոյեանը:

«Շարունակում են երկարացուել կալանքի ժամկէտները, ընդ որում՝ մեր քաղաքատարկեալներից մեծ մասի հետ որեւէ քննչական գործողութիւն չի կատարուում, նրանք ուղղակի պահուում են այնտեղ: Ըստ էութեան, քրէական գործը չի քննուում, չի փորձուում պարզել դրա հանգամանքները, եւ դա մէկ անգամ եւս վկայում է, որ այդ քրէական գործերը ուղղակի շինծու գործեր են, որի հետեւում որեւէ բան չկայ, ուղղակի կայ քաղաքական պատուէր՝ այդ մարդկանց պահել անազատութեան մէջ», - պնդեց Արման Մուսինեանը:

## ՄԱՐԴԱՄՊԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԱԶՍ Է ԱՐՉԱԿՈՒԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:  
Արդեն մի քանի օր է՝ ազատութեան մէջ է Նոր Հաճընի նախկին քաղաքապետ Արմէն Քէշիշեանը (մականունը՝ Ուզբօ): Այս տեղեկատուութիւնը հաստատեց ՀՀ Արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական վարչութեան պետի մամուլի քարտուղար Արսէն Բաբեանը՝ «Ա1+»-ին յայտնելով, որ նա ազատ է արձակուել, քանի որ լրացել է նրա պատժամկէտը:

Պաշտօնավարման ժամանակ Արմէն Քէշիշեանը 2005թ. Սեպտեմբերի 24-ին ատրճանակով սպանել էր «Էլեկտրական ցանցեր» ընկերութեան Արգիշի մասնաճիւղի սնօրէն Աշոտ Մխիթարեանին վրայ: Արմէն Քէշիշեանը ազատագրուել էր 3 տարի 6 ամիս ժամկէտով:

Ի դէպ, ոստիկանութեան հաղորդագրութեան համաձայն՝ Ապրիլի 29-ին, Արմէն Քէշիշեանը կամաւոր յանձնել է 9 մմ տրամաչափի «Վիկինգ» սիպի ատրճանակի 99 փամփուշտ եւ 1 պահուսակ՝ յայտնելով, որ դրանք իրեն պատկանող զէնքերն են, որն առգրաւուել էր 2005 թ. Սեպտեմբերի 24-ին: 2005 թ. Սեպտեմբերի 24-ին Նոր Հաճընի քաղաքապետ Արմէն Քէշիշեանն հենց այդ իր մօտ եղած «Վիկինգ ՄՈՒ 466» սիպի 9 մմ տրամաչափի ատրճանակից էր կրակել եւ սպանել էր Աշոտ Մխիթարեանին:

Այդ զէնքը նրան նուիրել էր վաղամեռիկ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը:

ԼՈՒՐԵՐ

ԷՂՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ԸԱՆԴԻՊԵԼ Է ԷԼՍԱՐ ՄԱՍԵՂԵԱՐՈՎԻ ԵՒ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԸԱՍԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԻ ԸՏՏ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի արտգործնախարար էդուարդ Նալբանդեանը Մայիս 6-ին Ստրասբուրգում՝ Եւրախորհրդում Ֆրանսիայի մշտական ներկայացուցչու թիւնում հանդիպել է Ատրպեյջանի արտգործնախարար էլմար Մամեդեարովի հետ, ապա կայացել է ընդլայնուած հանդիպում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիէի, Մեթիւ Բրայզայի, Եուրի Մերզլեակովի եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցչի Անձէյ Կասպրչիկի ներկայութեամբ:

Հանդիպումից յետոյ էդուարդ Նալբանդեանը լրագրողներին յայտնել է, որ նախարարների հանդիպումը կրում էր ճանաչողական բնույթ, երկու նախարարները կարծիքներ են փոխանակել Ղարաբաղի գործընթացի վերաբերեալ, ներկայացրել իրենց երկրների մօտեցումները եւ պայմանաւորուել շարունակել բանակցութիւնները: Նախարարները նախագահներին կը ներկայացնեն քննարկման արդիւնքները, եւ նախագահների կողմից կ'ընդունուեն հետագայ անելիքները:

Մինչ այդ նոյն տեղում՝ Ֆրանսիայի մշտական ներկայացուցչու թիւնում, Հայաստանի արտգործնախարարը հանդիպել էր Մինսկի խմբի համանախագահների եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցչի հետ:

Արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ հանդիպման ընթացքում քննարկուել են համանախագահների կողմից ներկայացուած առաջարկների հի-

ման վրայ բանակցութիւնների շարունակման հետ կապուած հարցեր: Էդուարդ Նալբանդեանը, բարձր գնահատելով մինչ օրս համանախագահների գործունէութիւնը եւ գործադրած ջանքերը, յայտնել է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ շարունակելու բանակցութիւնները լուծումներ գտնելու համար:

Հայաստանի արտգործնախարարը Ստրասբուրգում մասնակցում է Եւրախորհրդի Նախարարների կոմիտէի 118-րդ նստաշրջանին: Նա հանդիպումներ է ունեցել նաեւ Եւրախորհրդի գլխաւոր քարտուղար Թերի Դեւիսի, Եւրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լուիս Մարիա դե Պուչի եւ Եւրախորհրդի մոնիտորինգի Ազոյի յանձնախմբի անդամ-դեսպանների հետ:

Արտգործնախարարը Եւրախորհրդի պաշտօնեաներին վստահեցրել է, որ Հայաստանում ժողովրդավարական հաստատութիւնների գործունէութեան վերաբերեալ ԵՆԽՎ-ի ընդունած թիւ 1609 բանաձեւի դրոյթները գտնուած են երկրի իշխանութիւնների ու շահբաւութեան կենտրոնում, եւ ներկայացրել է այդ բանաձեւում ամփոփուած, ինչպէս նաեւ ընտրական գործընթացների բարելաւման վերաբերեալ միջազգային եւ մասնագիտական կազմակերպութիւնների այլ առաջարկների իրագործման ուղղութեամբ կատարուող քայլերը:

Քննարկուել են նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի հետ կապուած հարցեր:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

անկողմնակալ հետաքննութիւնը: Յետընտրական շրջանին կատարուածի հիմնական պատասխանատու նկատելով Ռոբերդ Քոչարեանին, Սերժ Սարգսեանի մասին առաջին նախագահ ըսաւ հետեւեալը. - «Նրա պատասխանատուութեան չափը կախուած է այն

կայն, այդ երկխօսութիւնը դիտելով ոչ թէ որպէս կողմերից մէկին ծնկի բերելու միջոց, այլ որպէս երկրում իրական բարեփոխումներ իրականացնելու եւ քաղաքական գործունէութեան նորմալ դաշտ ստեղծելու պատեհութիւն: Դրա համար անհրաժեշտ է, որ Հայաստանի կառավարութիւնը նախ եւ առաջ լիապէս կատարի Եւրախոր-



Գոնկրէսի մասնակիցները կը փորձեն մուտք գործել դահլիճ

դիրքորոշումից, որը նա կը դրսեւորի Մարտի 1-ի ոճրագործութեան անկողմնակալ հետաքննութեան ապահովման գործում: Սարգսեանը իր անմեղութիւնը ապացուցելու աւելի յարմար եւ շահաւէտ միջոց չունի, քան համաձայնել այդ ոճրագործութեան հանգամանքների միջազգային, անկախ հետաքննութեան անցկացմանը»:

հուրդի Խորհրդարանական վեհաժողովի Ապրիլի 17-ի թիւ 1609 բանաձեւի՝ որպէս երկխօսութեան նախապայման ներկայացուած պահանջները. Մարտի 1-ի իրադարձութիւնների անկախ, թափանցիկ եւ վստահելի հետաքննութիւն, քաղաքատարկեալների ազատ արձակում, ժողովներ, հանրահաւաքներ, ցույցեր, երթեր, անցկացնելու մասին օրէնքի լրացումների չեղեալ յայտարարում եւ այլն»:

Հայաստանի մէջ ստեղծուած իրավիճակէն միակ ելքը յայտարարելով նախագահի ու խորհրդարանի արտահերթ ընտրութիւնները, Լեւոն Տէր-Պետրոսեան յայտնեց, որ այժմ ընդդիմութիւնը կանգնած է «չարժմանը նոր բովանդակութիւն հաղորդելու մարտահրէժի առջեւ», եւ առաջարկեց շարժումը օժտել կազմակերպչական նոր ձեւով ու նոր անուանումով՝ Հայ Ազգային Գոնկրէս: Հետագային չբացառելով նոյնիսկ կուսակցութեան վերածելը, - «Ձի բացառում նաեւ, որ կուսակցութիւնը իր գործունէութիւնը հիմնականում ծաւալի ստուերային կառավարութեան միջոցով, ինչի առաւելութիւնները յայտնի են ողջ քաղաքակիրթ աշխարհին», ըսաւ Լեւոն Տէր-Պետրոսեան:

Ողջունելով հանդերձ վարչախումբի դէմ պատժամիջոցները, Տէր-Պետրոսեան յայտնեց, որ խորապէս անհանգստացած է Հայաստանի դէմ ծրագրուող տնտեսական պատժամիջոցներու վերաբերեալ յայտարարութիւններէն:

«Համաժողովրդական շարժման անունից ես դիմում եմ Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութեանը եւ «Հազարամեակի մարտահրաւէր» ծրագրի վարչութեանը՝ ինդրելով գերծ մնալ Հայաստանին յատկացուող օգնութիւնները նուազեցնելու կամ դադարեցնելու մտադրութիւնից»:

Լեւոն Տէր-Պետրոսեան իր ելոյթի մէջ խիստ քննադատութեան ենթարկեց Արեւմուտքը՝ մասնաւորապէս եւրոպական կառույցները, որոնք կը թերանան Հայաստանի ժողովրդի առջեւ նաեւ իրենց ստանձնած պարտաւորութիւններէն, սկսած՝ «Ա1+»-ին եւ «Նոյնան Տապան»-ին եթեր վերադարձնելու անոնց անկարողութենէն, մինչեւ նախագահի վերջին ընտրութիւններու ու յետընտրական իրադարձութիւններու գնահատականները:

ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ԿՈՍԻՏԵԻ ՈՒՂԵՐՁ

Ամտեսելով Եւրոխորհրդի բանաձեւը, իշխանութիւնները ամէն ինչ անում են քաղբանտարկեալների հնարաւորինս երկար հասարակութիւնից մեկուսացնելու համար: Մենք լի ենք վճռականութեամբ, այս ամէնը երկար տեւել չի կարող: Յաղթելու ենք: Հիմնականում մարդկանց դատապարտում են ոստիկանական կեղծ գեկոյցների հիման վրայ՝ չունենալով ոչ մի ապացոյց: Հայաստանի Հանրապետութիւնում կեղծիքը, դաւադրութիւնը, զրպարտութիւնը, դատական իշխանութեան գէնքն են դարձել՝ անմեղ մարդկանց դատապարտելու գործում: Երկու ամիս անց ողբերգական իրադարձութիւններից՝ նախաքննական մարմինը այդ սպանութիւնների առնչութեամբ ոչ մի քննական գործողութիւն չի կատարել: Մեր ընկերներից եւ ոչ մէկը մինչ օրս չի հարցաքննուել սպանութիւնների դրուագներով, քանզի ամենատեղեկացուածը այս գործերով հենց Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններն են, քանի որ մարդասպաններին ճանաչում են անուն առ անուն: Մարտի 1-ի ողբերգութիւնը հիմք ընդունելով՝ սրանք 1 նպատակ են հետապնդում: Ծիծով մեղադրանքներով վարկաբեկել Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորած համաժողովրդական Շարժումը, մեզ՝ նրա կողմնակիցներիս, հնարաւորինս երկար պահել կալանավայրերում: Կոմիտէն ողջունում է Կոնգրեսի մասնակիցներին, ցանկանում բաւարար եռանդ եւ կամք:

- Յաղթելու ենք
- Պայքար, պայքար մինչեւ վերջ:
- Քաղբանտարկեալների Կոմիտէ

Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ

Շարունակուած էջ 1-էն  
Չուրը ոչ մէկի սեփականութիւնը չէ, այս երկրում մենք հիւր չենք, այլ՝ տանտէր եւ իրաւունքների հետ միասին ունենք նաեւ պարտականութիւններ: Յիշէք այն հանգամանքը, որ թողնելով Ձեր եւ Մեր Հայրենիքը, դուք Չուր էք լցնում ռեժիմի ջրաղացին, քանի որ նրանց ամենամեծ ցանկութիւնը Ձեզ՝ գիտակից եւ ակտիւ քաղաքացիներիդ, արտագաղթի մղելն է:

Սա մեր երկիրն է, եւ մենք պէտք է յստակ գիտակցենք: Ոչ ոք չի կարող մեր հողուց հանել Ազատութեան եւ Արդարութեան համար մղուող պայքարի ձգտումը: Մենք՝ մեր երկրի արժանաւոր գաւակներս, պարտաւոր ենք պայքարել յանուն մեր երեխաների պայծառ ապագայի եւ քաղել մեր յաղթանակի պտուղները:

Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութիւն

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

ՐԱՅԱՍՏԱՆ

Ս.Դ. ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԼԻԻՏՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԽՕՍՔԸ ԶԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՄԱՅԻՍ 2-Ի ԳՈՆԿՐԵՄԻՆ

Յարգելի Պարոն Նախագահ, կոնգրեսի յարգարժան մասնակիցներ: Թող տուէք Ս. Դ. Յնչակեան կուսակցութեան անունից ողջունել Զեյ: Համաժողովրդական շարժման առաջին կոնգրեսը խնդիր էր դրել նախագահական ընտրութիւնների միջոցով երկրում վերականգնել Սահմանադրական կարգը, համախմբել հասարակութեանը, վերականգնել նրա հաւատը ապագայի նկատմամբ: Առաջին խնդիրը մեզ չյաջողուեց իրականացնել, քանի որ Շարժումը որդեգրել էր քաղաքակիրթ պայքարի ճանապարհ, իսկ մեր դէմ իշխանութիւնը պայքարում էր օրինազանց, բիրտ ուժի, հակաժողովրդական մեթոդների կիրառմամբ: Բոլորս հասկանում ենք, թէ ինչու իշխանութիւնը այդ ճանապարհով գնաց եւ կարիք չկայ կրկնուելու: Սակայն, չեմ կարող չնշել, որ նորանկախ Հայաստանի պատմութեան մէջ այսպիսի վայրագութեան դրսեւորում, ինչպիսին Մարտի 1 է չի եղել, երբ հայ գինուորին հրամայուեց կրակել հայ ժողովրդի վրայ:



Լիւտմիլա Սարգսեան

այլեւ Հայաստանի միջազգային վարկը: Ամէն քայլափոխի խախտելով Եւրոկառուցցների առջեւ ստանձնած պարտաւորութիւնները, երկիրը դնում են ծիծաղելի, անլուրջ վիճակի մէջ եւ ստեղծում բազմաթիւ նոր սպառնալիքներ ու մարտահրաւէրներ ազգային անվտանգութեանը: Այսօր էլ, իբր ընդառնալով ԵՆԽՎ-ի բանաձեւին, ազնիւ, անմեղ մարդկանց ձերբակալում են քաղաքական հայեացքների համար՝ աշխարհին նրանց ներկայացնելով որպէս քրէական յանցագործներ՝ փորձելով խուսափել քաղաքական բանտարկեալ ունենալու փաստից:

Փոխելով քաղաքատարկեալների խափանման միջոցը՝ նրանց վրայից չեն հանուում մեղադրանքները՝ դրսի համար առողջացման իմիտացիա ստեղծելով: Մենք չենք կարող համակերպուել այս գործեւորածին: Մենք պահանջում ենք

Ազատութիւնը, արդարութիւնը, արժանապատուութիւնը այլեւս դատարկ հնչիւններ չեն եւ դարձել են հասանելի նպատակ պայքարող հայի համար

Ակնյայտ փաստ է, սակայն, որ Շարժմանը յաջողուեց 10-ամեայ թմբիրից յետոյ արթնացնել հայ հասարակութեանը, բարձրացնել նրա քաղաքացիական գիտակցութիւնը եւ մասնակիցը դարձնել երկրում տեղի ունեցող գործընթացներին: Ազատութիւնը, արդարութիւնը, արժանապատուութիւնը այլեւս դատարկ հնչիւններ չեն եւ դարձել են հասանելի նպատակ պայքարող հայի համար: Այս բոլոր համար մենք պարտական ենք նախ եւ առաջ հիմնադիր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին:

ազատ արձակել մեր ընկերներին եւ ճանաչելով բոլոր կալանաւորումները անօրինականութիւնը՝ պատասխանատուութեան ենթարկել դրանք իրականացնողներին:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը չի կարող հանդուրժել պետութեան եւ պետականութեան նկատմամբ նման անլուրջ մօտեցումները, քանզի դրանք անհեռանկարային են դարձնում հայութեան գոյատեւումը հայրենիքում եւ վտանգի տակ դնում հայապահպանման ինդիքը սփիւռքում: Ես հասկանում եմ, որ այս ուժի մին շատ ցանկալի կը լինէր ազատուել եւս կէս միլիոն գիտակից քաղաքացիներից, որոնց համար չեն կարող բանտերում տեղ ապահովել: Ուստի մեր բոլորի խնդիրն է կանխել ուժի մի այս հակահայրենական քաղաքականութիւնը՝ յոյս ներշնչելով մեր հայրենակիցներին, որ մօտ ապագայում երկիրը կը մտնի զարգացման նոր փուլ, որտեղ կը գերիշխեն սոցիալական արդարութիւնը, օրինականութիւնը եւ համերաշխութիւնը:

Ես վստահ եմ, եւ կոնգրեսի բոլոր մասնակիցները եւ կոնգրեսի որոշումներին անհամբեր սպասող հասարակութիւնը, վճռական է այս իշխանութիւններից վերջնականապէս ձերբազատուելու եւ երկրում օրինականութիւն հաստատելու գործում:

Յաղթելու ենք:

ԵՐՈՂԱԿԱՆ ՇԱՐԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

Անկախութեան հռչակումից յետոյ անդամագրուելով եւրոպական տարբեր կառույցներին, վաւերացնելով Եւրոպայում գործող մի շարք պայմանագրեր՝ Հայաստանն ընտրեց այդ ապրելակերպը, բնականաբար, իր վրայ պարտաւորութիւն վերցնելով կեանքի տարբեր բնագաւառները համապատասխանեցնել եւրոպական չափանիշներին:



Վահան Շիրխանեան

Այս համատեքստում վերլուծելով Հայաստանի եւրաինտեգրման անցած տասը տարիները՝ պաշտպանութեան նախկին փոխնախարար, ՄԴՀԿ անդամ Վահան Շիրխանեանը մեղադրում է եւրոպական կառույցներին Հայաստանի պարտաւորութիւնների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողութիւն չիրականացնելու, աւելին՝ իրենց թերացումներում Հայաստանի իշխանութիւններին աջակցելու, խրախուսելու մէջ. «Եւրախորհրդին անդամագրուելուց յետոյ Հայաստանում անց են կացուել 2 նախագահական, 2 Աժ ընտրութիւններ, մէկ Սահմանադրական հանրաքուէ: Բոլորը եղել են հիմնովին կեղծուած: Բայց դրանց յաջողութիւնը մեր շնորհաւորանքները: Միամտութիւն է կարծել, թէ եւրոպական կառույցները պատշաճ տեղեկացուած չեն: Ուրեմն, շատ լաւ գիտեանալով, որ ընտրութիւնները Հայաստանում ուղեկցուել են համատարած ընտրակաշառքով, հետապնդումներով, բռնութիւններով, քուէների թալանով՝ այնուամենայնիւ, շնորհաւորում եւ լեզիտիմացնում էին ուժի մի»: Մեր գրուցակիցը համարում է, որ՝ «Սա աչքակապութիւն է, երկակի ստանդարտների ուղղակի կիրառում՝ մի երկրում քուէների գողանալ թող չենք տայ, միւսում՝ թող կը տանք, իսկ երրորդում կը խրախուսենք, որ ամէն կերպ պահպանի իշխանութիւնը: Մարտի 1-ը ցնցեց աշխարհին, իսկ իրենք ասում են՝ «ենթադրեալ քաղաքատարկեալներ...»: Այսպիսի կառույցների հետ մենք պայծառ ապագայի՝ ինչպէս իրենք են ներկայացնում, հասնել չենք կարող»: Անգլիայի, Ֆրանսիայի եւ այլ երկրների նման վարքագիծը մեր գրուցակիցն այսպէս է բացատրում. «Միայն սեփական ազգային շահերի հետապնդումով, որոնց աւելի հեշտ է հասնել, եթէ այստեղ թող եւ ոչ լեզիտիմ, այսինքն՝ մանիպուլյացիաների ենթակայ իշխանութիւն լինի»:

այն ժամանակ, երբ չի ունեցել ընդգծուած լիզեր: Ժողովուրդը միշտ քուէարկել է այս իշխանութիւնների դէմ: Այլ բան է, որ մենք պէտք է տարանջատենք եւրաքաղաքակիրթութիւնը, որը համաշխարհային արժէք է, այսօրուայ եւրաշխարհի վարած քաղաքականութիւնից, որի առաջին գոհը ինքը Եւրոպան է»: Այն, որ շատ գործիչներ 2008 թ. նախագահական ընտրութիւնների վերաբերեալ ընդունած ԵՆԽՎ բանաձեւը որակում են «բաւականին կոշտ», մեր գրուցակիցի մօտ թերահաւատութիւն է առաջացնում. «Մնում է շնորհակալութիւն յայտնել ԵՆԽՎ-ին, որ չնկատեց 2003-ի, 2004-ի Ապրիլին կալանաւորուած քաղաքատարկեալներին, իսկ այսօր աչքերը բացեց: ԵԱՀԿ առաջին գեկուցն էլ ինձ չի զարմացնում: Ընտրութիւնները իրօք ընթացել են Հայաստանի համար նրանց սահմանած ստանդարտներով, ինչի արդիւնքում պէտք է ձեւաւորուէր մաքսիմալ կառավարող իշխանութիւն: Եւրաինտեգրացումը Հայաստանում տեղի է ունեցել Հայաստանի իրականութեան հետ ոչ մի կապ չունեցող, օտար կլիշեներով, եւ մենք այսօր ունենք հակաժողովրդավարական, հակաշուկայական, հակասահմանադրական, վայրագ լիբերալիզմի երկիր: Արժէ՞ արդեօք սրա համար նրանց շնորհակալութիւն յայտնել»:

«Առաւօտի» դիտարկմանը՝ ազատական տնտեսութեան հիմքերը Հայաստանում դրուեցին առաջին նախագահի օրօք, ում նախագահական ընտրութիւններում սատարեց ու շարունակում է սատարել ՄԴՀԿ-ն, Վահան Շիրխանեանը պատասխանեց. «Առաջին նախագահի ժամանակ տեղի ունեցաւ հողի սեփականաշնորհում, որը հնարաւորինս արդար եւ ճշմարիտ ճանապարհով եղաւ: Այնուհետեւ սեփականաշնորհուցին մանր օբեկտները: Ամենալուրջ ու վայրագ սեփականաշնորհումը իրականացուել է Ռոբերտ Գոչարեանից սկսած՝ կապի, ոսկու համակարգեր, կոնեակի գործարան, էլեկտրացանցեր, հակա գործարաններ»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ «ԱՌԱՒՕՏ»

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

# ԱԶԳԱՅԻՆ

## ՈՂՋՈ՛ՅՆ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ

# ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԽԻՂՃԻՆ ՁԱՅՆԸ

Պետութիւնից էլ բարձր է մարդը եւ նրա ազատութիւնը:

ԼԵՆՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

### ՄԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Եթէ այս ինքնակոչ «տղամարդը» յամառի մնալ Հայաստան, կարելի է անվարան հաստատել թէ Ռոբերդ Քոչարեանը շուտով պիտի չունենայ փախչելիք տեղ: Ազատութեան հրապարակի վրայ, իր բառերով, «թատրոն խաղացողները» իր ոճրային գանկէն ներս պիտի խրեն վերջին տասնամեակի հայաստանեան սա տխուր իրողութիւնը – Քոչարեանի մտային նենգութիւնն էր այն գլխաւոր պատճառը որ, ոճրային անբարտաւանութեամբ, անմենաշնորհեալ եզակի տղամարդ համարեց ինքզինք, երկրի ամբողջ ժողովուրդին ասպարէզ կարգաց թէ իրմէ գատ «Հայաստանում տղամարդ չկայ», նախագահի նուիրական կոչումը շփոթեց խուլիգանական իմաստազուրկ պոռոտախօսութեան հետ, եւ իր գործած ոճիրներով ապացուցեց այդ տգիտութեան ահաւոր համեմատութիւնները:

Միտքի Նիկոլ Փաշինեան, քու «Հայկական ժամանակ»-ի մէջ լոյս տեսած «Պետութիւնն է Մարդու Համար» յօդուածը այնքան դիպուկ ճշգրտութեամբ արտաբանութիւնը կուտայ քոչարեանական խելագարութեան սինտրոմին: Ախտանշումը կը սկսի իր չկայացած տղամարդու գառանցանքներով, ապա կ'անցնի պողպատեայ ընդդիմութեամբ գինք ձաղկող ամբողջ ազգի մը քաջարի տղամարդկանց բովէն, որմէ ետք կը նշէ պետականութեան եւ օրինականութեան իր խոր տգիտութեան արտառոց տափակութիւնները, հասնելու համար իր պաշտօնի կատարեալ անանկացման ու ոճրային վերջաբանին՝ ձերբակալութիւններուն, բանտարկութիւններուն եւ մարդասպանութիւններուն:

Որքան յստակ կերպով բանա-

ձեւած եւ վերջին ամիսներու քաղաքական պայքարի էութիւնը բնութագրող սկզբունքային սա կեղրունական երկընտրանքը –

«Պետութիւնն է մարդու համար, թէ՞ մարդը՝ պետութեան,

«Օրինականութիւնն է քաղաքացու համար, թէ՞ քաղաքացին՝ օրինականութեան,

«Կայունութիւնը պէտք է ծառայի մարդուն, թէ՞ մարդը՝ կայունութեանը»,

Ու հաստատակամ կը յայտարարես թէ, պայքարի քու ընկերներուդ նման, դուն եւս ամուր կանգնած ես՝ հայրենիքին առաջադրուող այս նո՛ր բայց հիւն ալլընտրանքի կողքին:

Մարդո՛ւ կողքին:

Հայ ժողովուրդի՛ կողքին:

Ինչպէս շեշտուեցաւ համաժողովուրդական շարժման 2 Մայիս 2008-ի երկրորդ համաժողովին (congress), Հայաստանի ժողովուրդը քաղաքացիական գիտակցութեան աննախընթաց զարթօնք ապրեցաւ Մարտ 1-ին: Արտաքնապէս հլու, յարաբերաբար կրաւորական եւ միշտ համբերատար հայ ժողովուրդը այլակերպուեցաւ, վերափոխուեցաւ, կազմակերպուեցաւ այդ օր: Իր քաղաքական առաջնորդ ԼԵՆՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԻՆՔ ԵՆԱ, իմ կարծիքով, հոգեփոխուեցաւ էսպէս: Ղարաբաղեան շարժման նախկին առաջնորդը այս անգամ եւս հետեւեցաւ ժողովուրդի իմաստութեան: Իր բազմադարեան իմաստութեամբ, ի վերջոյ ժողովուրդն է իր գերագոյն, ճշմարիտ ուղեցոյցը՝ մանաւանդ երկրի մը ճակատագրական այնպիսի պահերուն գորս ապրեցաւ Հայաստան աշխարհը վերջին ամիսներուն: Նոյնպիսի այլափոխութեան ականատես եղանք շարժման միւս առաջնորդներուն մօտ, որպիսիք են Հանրապետութիւն կուսակցութեան Արամ

Սարգսեանը, ՀԺԿ-ի Ստեփան Դեմիրճեանը, ՄԴՀԿ-ի Լիւդմիլա Սարգսեանը եւ ուրիշներ:

Այս չքնաղ երկիրը, Հայաստանը, այլեւս կը պատկանի իր հպարտ, ազատ եւ անկախ քաղաքացիներուն, ինչպէս բանաձեւեց Արամ Սարգսեանը – եւ ոչ թէ բռնատիրութեան աւագակապետներուն եւ հարստապետական քառասուն ընտանիքներուն կամ աւագակներուն: Արեւի լոյսին պէս թող յստակ ըլլայ ասիկա: Եթէ անհրաժեշտ է, սպիտակ թուղթի վրայ սեւ տառերով թող միանգամ ընդմիջտ արձանագրուի՝ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան առաջին էջին վրայ:

Կը միանամ քեզի, արդար ըմբոստութեամբ ժողովուրդի խիղճին ձայն տուող իմ բարեկամ Նիկոլ Փաշինեան: Այո՛, թէլ է պէտք այն կեղծ «օրինականութեան», սուտ «կայունութեան» եւ մաֆիական «պետութեան» վրայ որ չի պաշտպաներ քաղաքացին, իր իրաւունքներն ու արժանապատուութիւնը որ մարդասպանին ազատութիւն կը շնորհէ, իսկ ազգային հերոսը ծաղրուծանակի կ'ենթարկէ. եւ որ կը պահանջէ հնազանդիլ աւագակապետական գոյգին: Որու գերագոյն նպատակն է թախանջիներու եւ ոճրագործներու տիրապետութեան հաստատուած կարգավիճակի պահպանումը:

Հակառակ իր կեանքի դժուակ պայմաններուն, այսօր վճռական պայքարի ելած է Հայաստանի ժողովուրդը իր երիտասարդութեան եւ ուսանողութեան հետ միասին: Ան լաւատեսութեամբ ու յաղթանակի նպատակասլացութեամբ կը մարտնչի իշխանութեան ողորմելի անպատասխանատուներուն դէմ: Ասիկա ի հարկէ չեն կրնար հանդուրժել պե-

տութիւն խաղացող քրէական յանցագործները՝ վերէն վար բոլոր մակարդակներու վրայ: Նոյնպէս չեն կրնար հանդուրժել երբ երիտասարդներ ու պատանիներ, ուսանողներ եւ աշակերտներ կը խանդավառուին պայքարողներու օրինակով – բան մը որ կը նշանակէ մերժողական կեցուածք՝ անոնց ստրկացումն ու կոյր հնազանդութիւնը ջատագովող իշխանութեան հանդէպ:

Երեւակայութենէ գուրկ, գաճաճ բռնակալները կը սարսափին՝ քեզ նման անբասիր, պարկեշտ ու ժողովրդամուէր երիտասարդութեան անդրդուելի խոյանքէն, գաղափարական խիզախ մարտակոչէն: Անոնք ահուդողով կը լեցուին ամէն անգամ որ քեզ նման ազատ մամուլի քաջասիրտ ներկայացուցիչները ժողովուրդին յայտնեն թէ մերկ է գեղձարարութեամբ գահը գողցած անարժան ու ոճրագործ «թագաւորը»: Ահա թէ ինչո՛ւ անոնք կատաղօրէն կը բարբաջեն՝ քեզ ու քու նման հերոսական երիտասարդները «Ֆիզիքապէս ոչնչացնելու» լիմար պատուէրներով ու սաղրանքներով:

Պատի՛ւ երիտասարդ լրագրողի քու անշեղ պարկեշտութեան, յարատեւութեան, հետեւողականութեան ու քաջութեան: Թող մի՛շտ հնչէ ճշմարտութեան քու ազատ ու անկաշկանդ ձայնը, սիրելի՛ երիտասարդ պայքարի ընկեր:

Իշխանութեան անսկզբունք վարձկաններ՝ ու կամազուրկ դահիճներ՝, վար առէք ձեր արիւնտտ թաթերը: Չհամարձակի՛ք դպչիլ Հայաստանի պարծանքն եղող մեր արթուն երիտասարդութեան արժանաւոր ներկայացուցիչ Նիկոլ Փաշինեանին: Մեր խաչեցեալ ժողովուրդի մշտարթուն հակող խիղճին ձայնն է ան:



**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ**

ԳԵՐՇ. Տ. ՅՈՒՎԱՆ ԱՐՔ ՏԵՐՏԵՆԱՆ ԱՌԱՋՆՈՐ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ

ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ ՁԵՌՆԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՊԻՏԻ ՇՆՈՐՀԷ

ԲՐՇ. ՎԱՀԷ ԱՐԿ ԱՐՈՎԵՆԻ ԵՒ ԲՐՇ. ՄԱՅՈՍ ԱՐԿ ՇԱՀԱԲԱՋԵԱՆԻ

Տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 29, 2008ին Երեկոյեան ժամը 6.30ին Հոլիվուդի Աք. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ մէջ

Եկեղեցւոյ Հասցէն  
1201 North Vine St., Hollywood  
Հեռ. (323) 465-9008

Արարողութենէ ետք՝ Հիւրասիրութիւն Մուրփի նուէր՝ \$ 100

Տեղեր ապահովելու համար հեռոձայնել Եկեղեցւոյ Հոգեւոր Հոլիւ՝ Տէր Մանուկին (818) 429-9843



**ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՅ ՆԱԽԱՃԱԾ**

Կազմակերպութեամբ՝  
**Հ.Մ.Մ.-ի Տիկնաց Միութեան**

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾՈՒԽ ՅԱՅՏԱԳԻՐ

Օրուայ Հիւրեր՝  
Բանախօս՝ Տիկին Արաքսի Թաթուլեան  
Երգչուհի՝ Մարգարիտ Ծահիճեան

**Կիրակի, 11 Մայիս 2008**  
առաւօտեան ժամը 10:00-ին  
Հ.Մ.Մ.-ի Կարօ Սողամալեան սրահին մէջ  
1060 N. Allen Ave., Pasadena

Մուտքի նուէր՝  
**\$20.00**

Տոմսերու համար դիմել՝  
Կարիճեից  
(626) 755-4773  
կամ Ծովիկից  
(626) 429-8366





# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

## ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻՍԱՅՐ ՏԱԾԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, Մայիս 3, 2008 թուականը կը հանդիսանայ պատմական օր մը ընդհանրապէս Լոս Անձեղըսահայ համայնքի եւ մասնաւորաբար Հայց. Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան թեմին համար: Արդարեւ, այդ օր, յատուկ կառուցուած վրանի մը շրջափակէն ներս, տեղի ունեցաւ պաշտօնական սկիզբը Առաջնորդարանի կից Մայր Տաճարի կառուցման, ի ներկայութեան ներկայ թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, թեմէն ներս ծառայող եկեղեցական պատկառելի խումբի, քաղաքային իշխանութեանց, Առաջնորդարանի, Մայր Տաճարի կառուցման եւ դրամահաւաքի յանձնախումբերու, նուիրատուներու, եւ բազմահարիւր հիւրերու: Ամբողջ արարողութիւնը ունէր հանդիսաւոր հանգամանք, եւ հոգեկան լիցքաւորումի տեղի տուող երեւոյթ: Այս ուրախ առիթը ակնհայտ էր իր բոլոր ներկաներուն դէմքերուն վրայ, քանի որ հիմը կը դրուէր Առաջնորդարանիստ Մայր Տաճարի մը, որ պիտի հանդիսանար հայ ժողովուրդի հոգեւոր արժէքներու գանձարան մը, քարեղէն կառուց մը ըլլալով հանդերձ:

\*\*\*

Պըրպէնքի ներկայ Առաջնորդարանը, որուն պիտի կցուի Մայր Տաճարը, Արեւմտեան թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի տեսլականն է, իրմով սկսուած, տեսլական մը գոր իր վախճանին պիտի հասցնէ ներկայ թեմակալ Առաջնորդը: Այս երկուքին համար ուղղակի կարելի է «շինարար» մակդիրը տալ, քանի որ երկուքն ալ հոգի ի բռին լծուեցան այս աստուածահաճոյ եւ հայրենասիրական գործին, եւ զայն յաջողցուցին ի մեծ գոհունակու-

թիւն եւ հպարտութիւն, հայ համայնքի գաւակներուն:

Արարողութիւնը ձեռնհասօրէն վարեց Մայր Տաճարի ղեկավար յանձնախումբի անդամ, Տիար Պերճ Շահպաղեան, որ անգլերէն լեզուով բացատրեց օրուան իմաստն ու տարողութիւնը հայ համայնքին համար: Ապա, սրբազան հօր գնահատանքի յուշանուէր մը յանձնուեցաւ Պըրպէնքի քաղաքապետարանի կողմէ: Խօսք առնելով, Առաջնորդ Յովնան Տէրտէրեան անգլերէն եւ հայերէն լեզուներով նախ գնահատեց Վաչէ Արք. Յովսէփեանի կատարած գործը, շնորհակալութիւն յայտնելով իրեն, եւ ապա տուաւ որոշ մանրամասնութիւններ Մայր Տաճարի շինութեան աշխատանքներուն մասին: Հրաւիրեց ներկաները մասնակից դառնալու Տաճարի կառուցման, քար մը որդեգրելով ապա իր շնորհակալութիւնները յայտնեց բոլոր բարերարներուն, իրենց նուիրումին եւ աւատածնութեան համար: Յատկապէս լիշեց Տաճարի շինարարութեան յանձնախումբի ատենապետ, Տիար Արմէն Համբարի անունը, եւ առաջարկեց որ բաժակ բարձրացուի իր եւ բոլոր բարերարներուն կենացը: Այս մէկը տեղի ունեցաւ արդէն իսկ պատրաստուած եւ շամփանիայով լեցուած գաւաթներու միջոցաւ:

Սոյն հոգեպարար արարողութեան աւարտին, ներկայ ժողովուրդը մուտք գործեց Գալայճեան սրահ եւ հիւրասիրուեցաւ ճոխ ընդունելութեամբ մը: Առաջնորդ Սրբազանը իւրաքանչիւր սեղան այցելելով գնահատեց ներկաներու մասնակցութիւնը: Իրապէս անմոռանալի օր մըն էր գաղութիս համար, եւ մեծ իրագործում մը Հայց. Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան թեմէն ներս:

Վարձքը կատար բոլորին: Յ.Ս.

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵՆԷՆ ԴՈԿՏ. Տ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԻՐ ՀԻՆԳ ԳԻՐՔԵՐԸ ԶՈՐԵՇՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՍԸ 7-ԻՆ ՊԵՐՊԵՆՔԻ ԱՌԱՋՆՈՂԱՐԱՆԻ ԳԱԼԱՅԵԱՆ ՍՐԱՅԻՆ ՄԷՁ

Իսկ 1908ի Սահմանադրութեանն եւ Հիւրիէթէն ետք Այնթապի մէջ առաջին տպարանը հիմնողը կ'ըլլայ Վահան Մ. Քիւրքճեանը:

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԻՐ ԿԱՐԳԻՆ

Հայրենիքը իր կարգին, ընդունալով Լոս Անճելըսի Այնթապու Հայրենակցական Միութեան խնդրանքին, 1970ին պետական որոշումով Երեւանէն ոչ հեռու Արարատեան դաշտին մէջ գտնուող Թա-

Շար.բ էջ 19

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB. FRIDAY NIGHTS AT ATLANTIS ARABIAN NIGHTS. ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. 626.449.4599. 162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107

# ԱՊՐԻԼ 24

## ՐԱՆՈՒՊՈՒՄՆԵՐ... ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԾ

Հայ ըլլալս է պատճառը, որ չես գիտեր ուրկէ ուր, անսպասելի պահու մը, անակնկալօրէն դէմդ կը ներկայանայ Հայկական Ցեղասպանութեան անդրադառնալու, այդ մասին բացատրութիւն տալու կամ վկայութիւն մը լսելու առիթը: Հաճելի պահեր են անոնք: Հոգեպէս կը սփոփուիս եւ մինչեւ ողնաձուծդ կ'ունենան զգացում մը, աւելի ճիշդ տարբեր զգացումներու խառնուրդ մը, որ սովորական բառերով դժուար է հարազատօրէն արտայայտել: Այդ զգացումներուն գլխաւորը այն է, որ դուն, որպէս մէկ փոքրիկ մասնիկը քու ազգիդ, տեղ մը, կէտի մը վրայ, անկատար լողողիկ, կրցար փոքր նպաստ մը բերել ազգիդ ու անոր մեծ դատին: Այդ օրը հոգեպէս աւելի հանգիստ կ'ըլլաս ու գործելու նոր եռանդ մը կը ծնի մէջդ: Դուն քեզ քիչ մը աւելի իմաստաւորուած կը զգաս:

### ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ԶԵՆՔԵԱՆ

2006 թուականին, խորհրդարանական պատուիրակութեամբ մը, պաշտօնական այցով կը գտնուէինք Պեյճիքա: Ծանօթացանք մեզ հիւրընկալող երկրի Ծերակոյտի եւ Երեսփոխանական ժողովի շարք մը անդամներուն հետ: Ընթրիքի մը ընթացքին, կողքս նստող երեսփոխանը, երբ իմացաւ հայ ըլլալս, հետաքրքրուեցաւ Հայկական Ցեղասպանութեամբ, լիբանանահայտութեամբ, Հայաստանի եւ Արցախի իրավիճակով: Հայտնի էր մասին իր ցոյց տուած հետաքրքրութեան եւ ունեցած տեղեկութիւններուն հանդէպ զարմանքս յայտնեցի: Պատասխանեց թէ ինք հայաստան մըն է: Խօսակցութիւնը հասաւ հոն, ուր ան ըսաւ թէ որպէս երեսփոխանական ժողովի արտաքին յանձնախումբի անդամ, վերջերս մասնակցած է ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու խորհրդարաններու համաժողովին, ուր թուրքիոյ ներկայացուցիչները ժողովականներուն բաժնած են հակահայ բովանդակութեամբ գրքոյկ մը: Ինք, կարողալէ ետք գրքոյկը, իրենց ծանօթ եւրոպացի երեսփոխաններուն բացատրած է գրքոյկին մէջ տեղ գտած տեսակէտներուն անհիմն ըլլալը: Ծնորհաւորեցի զինք եւ փափաք յայտնեցի ունենալ այդ գրքոյկէն: Խոստացաւ իր օրինակը տալ ինծի, խնդրելով որ, իրմէ ստացած ըլլալս չհրապարակեմ: Ան յարգեց իր խոստումը եւ յաջորդ օր, խորհրդարանի նախարարներէն մէկուն մէջ, առանձնացաւ հետս եւ պահարանի մը մէջ գրուած գիրքը յանձնեց ինծի (Ես ալ յարգելով խոստումս իր անումը չեմ հրապարակեր): Այս առիթով ան չաւելեալ հետաքրքրութիւն ցոյց տուաւ Հայկական Ցեղասպանութեան պատմական հանգամանքներուն շուրջ՝ որ բաւարարեցի մեծ սիրով: Երանի մեր իստակցութիւնը աւելի երկար տեւեր, մեր խումբը արդէն դուրս եկած էր խորհրդարանէն, տեղաւորուած ինքնաշարժներուն մէջ եւ կը սպասէր ինծի մեկնելու համար յաջորդ ժամադրութեան: Մենք ակամայ բաժնուեցանք (Կողքի սիւնակով մեր ընթերցողներուն կը ներկայացնեմ «Հայկական Հարցը եւ Իրականութիւնները» վերնագիրը կրող այդ գրքոյկը):

2005 թուականին, Երեւանի մէջ կը մասնակցէի Պատգամաւորական Բարեկամութեան Հայկական Վեհաժողովին, որ նուիրուած էր Հայաստանի Ազգային ժողովի հիմնադրութեան 15-ամեակին: Վեհաժողովին կը մասնակցէին բազմաթիւ երկիրներէ ժամանած խորհրդարանական պատուիրակութիւններ: Հիւրանոցի նախամուտքին, միջին տարիքով անձ մը մօտեցաւ ինծի եւ ոչ սահուն անգլերէնով ներկայացուց ինքզինք, Բուլլո Արճաքաս, էսթոնիայի երես-

փոխանական ժողովին անդամ: Ան փափաք յայտնեց գրուեցել հետս սիրով ընդառաջեցի: Հետաքրքրուեցաւ Հայկական Ցեղասպանութեամբ եւ ընդհանրապէս սփիւռքահայութեամբ. կարելի եղած չափով բաւարարեցի զինքը: Այն հարցիս թէ ուրկէ՞ կու գայ Հայկական Ցեղասպանութեան եւ սփիւռքահայութեան հանդէպ իր այս հետաքրքրութիւնը, պատասխանեց թէ այդ իր մէջ ծնած է երբ ծանօթացած է Տիկ. Աննա Հէտիկ Պուլի կեանքին ու գործունէութեանը: Այդ անուան մասին իմ անտեղեկութիւնս յայտնեցի: Հակիրճ բացատրեց թէ ո՞վ է Հէտիկ Պուլ, խոստանալով որ, անոր մասին, իր յիշողութեան ապահիւնելով, կրնայ փոքր գրութիւն մը պատրաստել: Ծնորհակալ եղայ: Յաջորդ օր, հիւանդոցային խցիկին մէջ կար անգլերէն լեզուով գրութիւն մը Հ. Պուլի մասին: Կողքի սիւնակով այդ գրութիւնը կը ներկայացնեմ մեր ընթերցողներուն, յուսալով որ այդ կ'ըլլայ նաեւ յարգանքի ուշացած արտայայտութիւն մը հայաստանի էսթոնիայի յիշատակին:

\*\*\*

1997-ին երեսփոխանական պատուիրակութեամբ մը, պաշտօնական այցով գտնուեցայ Ռուսաստան: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրորին: Մեր պաշտօնական ծրագիրը կը սկսէր խորհրդարան այցելութեամբ, անոր բաժանմունքներուն հետ ծանօթացմամբ եւ առաջին հանդիպումը՝ երեսփոխանական ժողովի մնայուն յանձ-

նախումբերու նախագահներուն հետ: Այս հանդիպման ընթացքին ինծի մօտեցաւ եւ ինքզինք ներկայացուց երիտասարդ երեսփոխան մը՝ Վարուժան Փամպուլեան, փոքրամասնութիւններու մնայուն յանձնախումբին նախագահ (Ռուսաստանի երեսփոխանական ժողովը կ'ընտրուի համեմատական դրութեամբ, որմէ դուրս, երկրին մէջ գտնուող 12 փոքրամասնութիւններէն իւրաքանչիւրը կ'ընտրէ իր ներկայացուցիչը, որ երեսփոխանի մը լիարժէք իրաւասութիւններով մաս կը կազմէ երեսփոխանական ժողովին: Փոքրամասնութիւններուն ներկայացուցիչները կը կազմեն փոքրամասնութիւններու յանձնախումբը, որուն նախագահութիւնը ամէն ամիս, հերթաբար կը ստանձնէ անոնցմէ մէկը: Մեր այցելութիւնը կը գուզադիպէր հայ ներկայացուցիչին նախագահութեան շրջանին): Ես եւ Վարուժան, ներկաներու զարմացկոտ հայեացքներուն տակ, ջերմօրէն ողջագոտուեցանք... կարծես շատ հին ծանօթներ ըլլայինք: Անմիջապէս Նեպիհ Պրորինի բացատրեցի այս ողջագոտման պատճառը: «Եղբայր, հայերը այսպէս են, միշտ իրար սիրող ու յարգող» - կատակեց ան: «Երանի ըսածդ միշտ ճիշդ ըլլար» - պատասխանեցի միտքէս: Յաջորդ օրերուն Վարուժանը պատուիրակութեան «պոչը չձգեց»: Կ'ընկերանար մեզի ամէնուրեք եւ ցոյց կու տար արտակարգ հոգատարութիւն: Այցելութեան վերջին օրը, հայ գործընկերս պատմեց թէ իրեն մօտեցած է հրեայ փոքրամասնութեան ներկայացուցիչը եւ դժգոհութիւն յայտնած լիբանանեան պատուիրակութեան հանդէպ իր ցոյց տուած ուշադրութեան (մեր այցելութեան նախորդ օրը Լիբանանի հարաւին մէջ տեղի ունեցած էր Սարաֆանտի դէպքը, ուր գոհ գացած էին 12 իսրայէլացի զինուորներ եւ Լիբանան-Իսրայէլ յարաբերութիւնը խիստ լարուած էր): Հրեայ երեսփոխանը Վարուժանին կ'ըսէ, որ եթէ նոյնիսկ հայ ծագումով երեսփոխան մը կայ պատուիրակութեան մէջ, ապա, այս հոտագարութիւնը Լիբանանի պատ-

Շաբ.ք էջ 17

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ»

Գրքոյկը բաղկացած է 55 էջերէ եւ կազմուած է երկու մասէ: Առաջին մասը քառալեզու (անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, թրքերէն) բովանդակութիւնն է, իսկ երկրորդ մասը, բովանդակութեան հետ առնչուող 17 փաստաթուղթեր են: Գիրքին հեղինակն է Տիարպեքիբի երեսփոխան փրոֆ. Ազիզ Աքիլիւ. անոր հրատարակչներն են Թուրքիոյ Ազգային Մեծ ժողովն ու Թափօններու Յաղթահարման Թրքական Հիմնադրամը: Գիրքը հասցեագրուած է ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու խորհրդարաններու 2006 Մայիս 26-30-ին կայացած գարնանային նստաշրջանին (Հեղինակը գիրքի հրատարակման համար իր շնորհակալութիւնը կը յայտնէ Թուրք Պատմաբաններու Ընկերակցութեան նախագահ փրոֆ. Եուսուֆ Հալաճօղլուին եւ փոխնախագահ՝ փրոֆ. Հիքմէթ Էօզտէմի-րին):

Գրքոյկին մէջ տեղ գտած սխալները, թերիներն ու հակասութիւնները կարելի է բաժնել երկու մասի: Առաջին մասը՝ կը բխի պատմական հանրայայտ իրողութիւններու անտեղեկութենէն կամ պատմական փաստերու հանդէպ յարգանքի պակասէն: Այս կարգի սխալներէն կարելի է նշել Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան թուականն է 1881, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան թուականն է 1889, Պողոս Նուպար Փաշա ունի զօրավարի կոչում, Յովհաննէս Ալլահվերտի անունով հայը եղած է երեսփոխանական ժողովի փոխ նախագահ՝ սկսած օսմանեան առաջին խորհրդարանէն մինչեւ 1915:

Այս կարգի պարզունակ եւ անիմաստ սխալները կ'ամբողջանան դիտաւորեալ եւ նպատակաւոր խեղաթիւրումներով, որոնց նպատակն է «փաստել» որ հայերու պնդած ցեղասպանութիւնը անհիմն է:

Հեղինակը, նախ քանի մը պարբերութիւններու մէջ կը փորձէ ցոյց տալ, որ հայերն ու թուրքերը 850 տարի իրար հետ ապրած են շատ խաղաղ: Ապա, յաջորդող չորս էջերուն մէջ, անոր գլխաւոր նպատակը կ'ըլլայ ցոյց տալ որ 1915 թուականի հայերու բռնագաղթը կարելի չէ ցեղասպանութիւն անուանել: Այստեղ, Ա. Աքիլիւի ածաբարութիւնը յստակ է: Ան ոչ մէկ խօսք կ'ընէ զանգուածային ջարդերուն, հրկիզումներուն, մտաւորականներու ձերբակալութեան, հայ բանակայիններու գիւնաթափման եւ սպանութեան, որոնց հանրագումարն է որ կը կազմէ ցեղասպանութիւնը: Ան միայն կ'անդրադառնայ բռնագաղթին եւ նոյնիսկ այստեղ, ան կ'իշխայ հակասութիւններու մէջ:

Ըստ հեղինակին «աքսորուած հայերը դրկուեցան Սուրիա, որ օսմանեան տարածք էր եւ կը գտնուէր պատերազմի ծիրէն ներս: Այս աքսորի համար, Օսմանեան Կայսրութեան նպատակը նախագուշական եւ ապահովական էր»: Այս պարբերութեամբ, հեղինակը յստակօրէն կ'ընդունի որ բռնագաղթը ունէր պետականօրէն կազմակերպուած բնոյթ: Մինչդեռ, քանի մը տող անդին ան կը գրէ. «1915 թուականի օսմանեան պետական պիւտճէին մէջ ոչ մէկ յատկացում

Շաբ.ք էջ 17

**ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅ ՄԸ, ԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԼԻԲԱՆԱՆԸ ԵՒ ԵՍԹՈՆԻԱՆ ԿԸ ՄԻԱՆԱՆ**

Տիկ. Աննա Հէտիկ Պուլը ծնած է Էսթոնիոյ Հեփսիլին աւանին մէջ, 1887-ին: Ան ուսուցչուհի էր եւ շատ աստուածապաշտ: 1909-ին, ան կարգ մը թերթերու մէջ կը կարդայ հայութեան հանդէպ եղած սարսափներուն մասին (հաւանաբար խօսքը կը վերաբերի Ա.տանայի Ա.դէտին.- Ե. ձ.): 1911-ին Հէտիկ Պուլ աշխատանքի կը սկսի Կիլիկիոյ Մարաշ (Գերմանիկէ) Բաղաբի մէջ: Հոն, իրենց ծնողները կորսնցուցած հայ փոքրիկներուն համար կար տուն մը: Սյն կը կոչուէր «BEITEL», ուր նաեւ կ'աշխատէին Գերմանիայէն եկած կամուարները. «տիկ. Պուլ կը գործակցի գերմանացի պատուելի Սոհմէի, տիկ. Ռուպարաչի, գուրգրիպի տիկ. Պիարրիս Ռոնէրի եւ այլոց հետ»: Որոշ շրջան մը տիկ. Ռոնէրի եւ տիկ. Պուլ կ'աշխատին Հայկալի մէջ: 1916-էն սկսեալ տիկ. Պուլ կ'աշխատի Կիլիկիոյ մէջ (Մարաշէն հարաւ փոքր գիւղ մը), ուր կար որբանոց մը ցեղասպանութեան ժամանակ իրենց ծնողները կորսնցուցած հարիւրաւոր եւ հազարաւոր հայ փոքրիկներուն համար:

1918-ին ֆրանսական զօրքերը կը գրաւեն Կիլիկիան եւ գերմանացի կամուարներուն կեանքը կը դառնայ հարցական, որովհետեւ այդ ժամանակա Յարանսան եւ Գերմանիան Համաշխարհային Ա. պատերազմի մէջ էին: Սակայն, ֆրանսացիները կ'երաշխարհեն, որ տիկ. Պուլ շարունակէ իր գործունէութիւնը:

1921-էն Հէտիկ Պուլը Սուրիոյ մէջ կ'աշխատի ֆրանսական «Արեւելի Բրիտանիայի Եւրոպայի» կազմակերպութեան մէջ: Ան օգտակար կը դառնայ հայերուն միջեւ: 1951 թուականը եւ 64 տարեկանին կը մեկնի Երուսաղէմ: Ան փափաք կը յայտնէ հաստատուել Սուրիոյ հայկական Հայաստան: Սակայն, խորհրդային իշխանութիւնները չեն արտօնէր: Հէտիկ Պուլ կը մահանայ 1981-ին, Արեւմտեան Գերմանիոյ մէջ:

ԳՌԻԼԼՕ ԱՐՁԱՔԱՅ Մ.Ս. (Էսթոնիոյ խորհրդարանի անդամ)  
**Kyllo Arjakas +372 50 28161 kyllo.arjakas@niigikogu.ee**  
 Երեւան, 2005 Նոյմբեր

ՎԱՍԵՐԳ

ԼԱՐԵ ԵՐԱԺՅԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ

«ՏԻԼԻՃԱՆ» ՇԱՐՔԻ ՅՐԴ ՏԱՐԻՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Սփիւռքային, յատկապէս ամերիկեան մեր պայմաններու տակ, մեծապէս զնահատելի եւ շնորհաւորելի են այն ձեռնարկներն ու նախաձեռնութիւնները որոնք ունին մնայուն եւ շարունակական հանգամանք: Նման կացութիւն ունի իր բազմաթիւ քովնտի օգուտները, որոնք, ոչ միայն կը հանդիսանան օգտակար խթանները նախաձեռնող միաւորներու ներքին կենսունակութեան եւ յարատեւելու վճռակամութեան, այլ նաեւ, եւ յատկապէս, իրենցմէ օգտուող հաւաքականութեանց դաստիարակութեան եւ ինչու չէ հոգեկան լիցքաւորման: Այս հակիրճ խորհրդածութեան կը տարուինք, երբ նկատի ունենանք Լոս Անճելըսահայ մեր համայնքի մշակութային, յատկապէս երաժշտական մարզէն ներս, «Լարք» երաժշտական ընկերակցութեան որակաւոր եւ կարեւորը, շարունակական նախաձեռնութիւնները, որոնք մէջ այս յօդուածի նիւթ հանդիսացող «Տիլիճան» շարքի պարզապէս է, որ անցնող Ապրիլ ամսուայ 27ին, 2008 տուաւ իր 3րդ շրջանի աւարտական համերգը, զոր պատասխանատուները կոչած էին «Յեղասպանութեան Յիշատակման Համերգ»: Այս մէկը կը հանդիսանար 3րդ տարուայ 6րդ համերգը, եւ եթէ ուզենք փոքրիկ հաշիւ մը ընել, պիտի անդրադառնանք որ «Լարք»ը եւ իր ղեկավարած «Տիլիճան» միաւորները, 3 տարիներու ընթացքին, դասական երաժշտութեան հայ եւ օտար սիրահարներուն պարզեւած են 18 տարբեր յայտագրերով, համերգներ, Լոս Անճելըսի գեղեցիկ, «Zipper» սրահ կոչուած վայրէջն ներս:

Այս ակնարկը ուրեմն, «Տիլիճան»ի 3րդ արժեւորումն է, եւ տրուած ըլլալով որ «Տիլիճան»ը արդէն իսկ հետաքրքրուող հասարակութեան կը ներկայացնէ իր 4րդ տարուայ լման յայտագիրը, դարձեալ 6 յաջորդական յայտագրերով, արդէն իսկ վստահութիւնը ունինք որ սկզբի մեր ակնարկած մնայուն եւ շարունակական պարագան ապահովուած, եւ «Լարք»ի եւ «Տիլիճան»ի պատասխանատուները իրականացուցած կ'ըլլան իրենց ճիգերը, համայնքի կեանքէն ներս:

Անդրադառնալէ առաջ վերջին համերգին, օգտակար կը նկատենք տալու մէկ հակիրճ նկարագրութիւնը, 3րդ տարուայ ընթացքին տեղի ունեցած վեց համերգներուն:

Այսպէս ուրեմն, ահաւասիկ ցանկը իրենց տարբեր բովանդակութիւններով.

- 2007-2008 շրջանի համերգները.
- Ա. Համերգ, Սեպտեմբեր 15, 2007
  - Յարութիւնեան Եռեակ (Trio)
  - Շարաֆեան դաշնակի հնգեակ (quintet) համաշխարհային փրը-

միերա

- Ֆրանք - դաշնակի հնգեակ Այս համերգին կը մասնակցէին ութը հայ եւ օտար արուեստագէտներ:

Բ. Համերգ, Հոկտեմբեր 15, 2007

- Մանսուրեան, հինգ կտորներ (baga telles)
- Ռավել - Չութակի եւ թաւ-Չութակի երկեակ (duo)
- Մենտըլան - դաշնակի եռեակ (Trio) 4 հայ եւ օտար արուեստագէտներ

Գ. Համերգ, Դեկտեմբեր 16, 2007

- «Լարք» ընկերացկութեան ուսանողներ
- Երաժշտական Քոմետիա
- Ֆօրցա Duo
- Մասնակիցներ, 3 հայ եւ օտար արուեստագէտներ:

Դ. Համերգ, Յունուար 20, 2008

- Շնիթթէ
- Շոսթաքովիչ - քառեակ
- Օրբելիան - քառեակ
- Սարեան - քառեակ
- Շոսթաքովիչ - երկու յորի-նումներ ութը հայ եւ օտար արուեստագէտներ:

Ե. Համերգ, Մարտ 30, 2008

- Քիւրթակ
- Լիկեթի
- Ավանսով
- Ռոսթոմեան, համաշխարհային փրըմիերա
- Հայրապետեան, սոնաթ
- Պարթոք
- 6 հայ եւ օտար արուեստագէտներ

Զ. Համերգ, Ապրիլ 27

- «Յեղասպանութեան» համերգ
- Կիւրճիէֆ եւ Կոմիտաս
- Պախ եռեակ
- Շոսթաքովիչ - դաշնակի հնգեակ ութը հայ եւ օտար արուեստագէտներ

\*\*\*

«Տիլիճան»ի 2007-2008 շարքին հինգ համերգներու մասին, զնահատական ակնարկներ եղած են հայկական եւ անգլիական մամուլներու մէջ, յատկապէս գեղարուեստական նուրբ ճաշակ ունեցող եւ նուիրեալ քրոնիկափր Անգինէ Մուրատեան-Քէշիշեանի, իմ եւ ուրիշներու կողմէ, ակնարկներ որոնք կ'անդրադառնային ընտրուած կտորներու գեղարուեստական բարձր որակին, եւ մասնակից արուեստագէտներու կատարողական զնահատելի մակարդակին մասին: Աւելի քան 30 հայ եւ օտար, երկսեռ արուեստագէտներ կը մասնակցէին այս 6 համերգներուն իբրեւ Չութակահարներ, դաշնակահարներ եւ տարբեր-տարբեր երաժշտական գործիքներու մասնագէտներ:

Ինչ կը վերաբերի 6րդ համերգին, նուիրուած հայկական ցեղասպանութեան յիշատակութեան, մենք ականատես եւ ունկնդիր եղանք խիստ հետաքրքրական յայտագրի մը, որուն մէջ մեծ վարպետու-

թեամբ եւ ձեռնհասութեամբ ունկնդրեցինք մեծն Կոմիտասի մեզի ծանօթ կտորները, յատկապէս «միսթիք» Կիւրճիէֆի եւ Հարթմանի կտորները, «Resonance» ճանչցուած անմասմալի կողմէ, կատարողութեամբ Փոլ Շիլֆֆըրի, սրինգի վրայ, Մաթիու Լուպինի, Պասունի վրայ (bassoon) եւ Քէսի Սոքոլի դաշնակի վրայ: Այս անսամալը մեզ դիւթեց Կոմիտասի եւ Կիւրճիէֆ-Հարթման կտորներով:

Յայտագրի 2րդ բաժնով, մեզի հրամցուեցան Պախի «Trio» սոնաթի, այս անգամ սրինգի, պասունի եւ Չութակի մասնակցութեամբ, իսկ Շոսթաքովիչի հրաշալի դաշնակի դժուարին գործը, մասնակցութեամբ երկու Չութակահարներու, Մովսէս Պօղոսեան, Սառա Թորնպլէյթ, Վիլլա՝ Փօլ Քոլէթթի, թաւ-Չութակ՝ Ռոնըլտ Լենտըրտ, եւ դաշնակ ճօան Մարթին: Այս հրաշալի երկի մատուցումը արժանացաւ, ինչպէս նախորդները, մեծ զնահատանքի երկարատեւ ծափահարութիւններով:

\*\*\*

Մենք, այստեղ խօսեցանք ընդհանուր կերպով, «Լարք» երաժշտական ընկերակցութեան, եւ անոր «Տիլիճան» միաւորի մասին: Պարտք կը զգանք մասնաւորաբար զնահատել աշխատանքը, տաղանդը եւ նուիրումը երկու անձնաւորութեանց, որոնք մեծ նուիրումով, անձնագոհութեամբ եւ ձեռնհասութեամբ, գեղարուեստական պահանջկոտ եւ ճաշակաւոր հասարակութեան մը կը պատրաստեն եւ կը ներկայացնեն յիշեալ որակաւոր եւ բազմատեսակ յայտագրերը, որոնք, ինչպէս ըսուեցաւ, կ'արժանանան ամէն անգամ, ունկնդիրներու լուրջ ուշադրութեան եւ զնահատանքի: Իրենց անձնական համեստութիւնը

վիրաւորեալ զնով իսկ, կ'ուզենք անդրադառնալ «Լարք» երաժշտական ընկերակցութեան գործադիր ղեկավար (executive director), վաստակաւոր երաժիշտ, խմբավար եւ նուիրեալ վաչէ Պարոտմեանի մասին, որուն տեսլականին եւ ճաշակին կը պարտինք ոչ միայն «Տիլիճան»ի, այլ ընդհանրապէս «Լարք»ի ամբողջ յայտագրերը: Վաչէ Պարոտմեան կը շարունակէ մնալ մեր համայնքի երաժշտական գործունէութեան «Տիւնմօ»ն, ներուժը, առանց որուն անկարելի պիտի դառնային «Լարք»ի ձեռքբերումները:

Քանի այստեղ խնդրոյ առարկայ է «Տիլիճան» միաւորը, պիտի ուզէինք նաեւ անդրադառնալ անոր «գեղարուեստական ղեկավար», Չութակահար եւ համակրելի արուեստագէտ Մովսէս Պօղոսեանի մասին, որ ոչ միայն կատարելագործուած արուեստագէտ մըն է, բեմական հաճելի ներկայութեամբ անձնաւորութիւն մը, այլ մանաւանդ «Տիլիճան» յայտագրերու իրականացնողը եւ մասնակիցը, իր Չութակի միջոցաւ: Կը մնայ մեզի նաեւ շնորհաւորել այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք իրենց նիւթական միջոցներով նեցուկ կը կանգնին «Տիլիճան»ի սենեկային երաժշտութեան այս զնահատելի շարքին: Երկար է շարքը այս անձնաւորութեանց, որոնց բոլորն ալ արժանի են զնահատանքի:

Այնքան ատեն որ մեր մէջ կան եւ կը գործեն վաչէ Պարոտմեանի, Մովսէս Պօղոսեանի եւ բարերարներու նման անձնաւորութիւններ, մենք կրնանք հանգիստ ըլլալ որ համայնքի մշակութային, երաժշտական կեանքը պիտի շարունակուի իր ներկայ գեղեցիկ ընթացքով: Վարձքը կատար' բոլորին:

**ԲՆՅԱՍՏԱՆԵՍՅՑ ՍՈՍԵՒԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԵԻՄՏԵԱՆ ԹԵՍ**

**ՅՈՒՐԵՒԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀՈՎԱՆԱԻՌՈՒԹԵԱՄԲ

**ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ**

**ՆՈՒԻՐՈՒԱԾ**

«ՇԻՐԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆՆԷՍԵԱՆԻ**

ԾՆՆԴԵԱՆ 80 ԱՄԵԱԿԻՆ  
ԵՒ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 55 ԱՄԵԱԿԻՆ

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ**

Հ.Բ.Մ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

ԹԷԲԷՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԿՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

**ՏԵՂԻ ՊԵՏԻ ՈՒՆԵՆԱԾ**

ԱՐԵԻՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԷՆ ԿԵՐՈՎ  
ՀԻՆԳՇԱՐՔԻ, ՄԱՅԻՍ 22, 2008 ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:30

3325 N. GLENOAKS BLVD., BURBANK, CA 91504

ՄՈՒՏՔԸ ԱՋԱՏ Է, ՀԻՐԱՍՊՈՒԹԻՒՆ

**ԳՐԱԴՈՒԾ ԹՈՒԿԱՆՆԵՐ**

Յուճիս 14	Հայրերու Օր
Օգոստոս 10	Հանգանակային Գաղտնիք
	«Մասիս» շաբաթաթերթի
Սեպտեմբեր 21	Հայաստանի Անկախութեան Փառասօց
Հոկտեմբեր 4	Հ.Մ.Ս.ի Տարեկան Պարահանդէս
Դեկտեմբեր 31	Նոր Տարուայ Խրախճանք

# «ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ»Ը ԵՒ ՎԱՅ ԴՊՐՈՑ

# ՅՈՒՇԵՐ ԱՆՅԵԱԼ ՕՐԵՐԻՑ

## ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱՃԵԱՆ

«Մայրերու Օր»ը որպէս ժողովրդային տօնակատարութիւն Ամերիկայի մէջ սկսաւ 20րդ դարու սկիզբը Ֆիլադելֆիա նահանգին մէջ, որուն հիմնադիրը կը նկատուի Աննա Ժարվիս անունով ամերիկուհի մը, որ մայրը կորսնցուցած էր փոքր տարիքին: Քանի մը փոփոխութիւններէ ետք, հայասէր նախագահ Ուոլթեր Ուիլսոնը 1914 Շաբաթ 10ին, Մայրերու Ազգային Տօն կը հռչակէ Մայիսի 22րդ Կիրակին:

Ասկից շատ առաջ, դարերէ ի վեր, հայ եկեղեցիին կը տօնէ Սբ. Աստուածածնի աւետման, մայրութեան եւ գեղեցկութեան օրը: Ամէն տարի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., Ապրիլ 7ին շնորհաւորական ուղերձ կը ղրկէ կանանց եւ մայրերուն:

Իսկ Ամերիկայի մայրերը լրիւ կը կատարեն իրենց մայրական պարտականութիւնները: Դժբախտաբար միայն մէկ փոքր տոկոսը, քանի որ հազարէ աւելի մայրեր բաւարար ջանք չեն թափեր ազատելու համար իրենց զաւակները պետական դպրոցներէ, ուր անոնք վտանգի տակ են խաթարումներու, մոլորութիւններու, ալլախուսումի, օտարացումի, եւ տակաւին... կրիւներու կը մղուին անոնք ալլազգի աշակերտներու հետ:

Հայ դպրոցի առաւելութիւնները բազմաթիւ են: Միայն հայերէն սորվելու համար չէ որ հայ դպրոց պէտք է յաճախեն մեր զաւակները, նաեւ հայ դպրոցները փաստեցին իրենց ուսման մակարդակի աւելի բարձր ըլլալը՝ բազմաթիւ պատճառներով: Երկրորդ, հայ դպրոցի մէջ հայ աշակերտները աւելի հարազատ կը զգան եւ ստորակարգութեան բարոյթներ չեն ունենար: Երրորդ, հայ աշակերտները, դպրոցը աւարտելէ ետք կը հեռանան եւ կը մոռցուին ոչ-հայ դասընկերները, բայց կը մնան հայ դասընկերները՝ գոնէ քանի հատը:

Կարեւոր կէտ մըն ալ կայ հայ աշակերտներուն ապագային գործ գտնելու առնչութեամբ: Աւելի քան 20 տարի Սաքրամենթոյ պաշտօնէայ եղած ըլլալով (մասնակի ժամերով) վիճակագրութիւններու մէջ տեսած եմ որոնք երկլեզու են, շատ աւելի դիւրաւ գործ կը գտնեն,

որովհետեւ առետրականները, մանաւանդ անոնք որոնք ուղղակի գործ կ'ընեն յաճախորդներու հետ, կը նախըտրեն վարձել երկլեզու պաշտօնէայ մը, իրենց անգլերէն լաւ չիօսող յաճախորդներուն համար:

Աշխարհի մեծագոյն յոյն փիլիսոփաները, Քրիստոսէ դարեր առաջ գրեցին «ձանչցիր ինքզինքդ» չքննարկուած կեանք մը չարժեք ապրիլ»: Իսկ այլ փիլիսոփայ մը Պրատտն ըսաւ որ մարդիկ 2 մեծ թշնամիներ ունին, ներքին եւ արտաքին՝ անոնցմէ աւելի մեծը՝ ներքինն է: Ուրեմն հայ մայրեր ճանչնանք ինքզինքնիս, քննարկենք մեր կեանքը, մեր զաւակներուն «ներքին թշնամիները» չըլլանք զրկելով զիրենք հայ դպրոցի առաւելութիւններէն:

Բայց կրթաթոշակի վճարումը: Հետեւեալ ձեւով կրթաթոշակ կէսի, կամ աւելի կը նուազի, եթէ մեծ ընկերութեան մը մէջ մօտիկ ազգական մը ունիք, ատիկա կը կոչուի համեմատուած նուիրատուութիւն (matching grant): Մեծ ընկերութիւնները ծրագիր մը ունին, ըստ որուն, երբ ունի պաշտօնէայ մը նուիրատուութիւն կատարէ կրթարանի մը, ներառեալ երկրորդական վարժարանի մը, նոյն չափ տուեալ ընկերութիւնը նուիրատուութիւն կը կատարէ նոյն այդ կրթարանին: Օրինակ եթէ պաշտօնէայ մը 500 կամ 1000 տոլար նուիրէ կրթարանին, ընկերութիւնն ալ 500 կամ 1000 տոլար կը նուիրէ: Կրնաք գիրքը ստանալ որ կը կոչուի matching grand booklet: Ինչո՞ւ հայերը չօգտուին վերոյիշեալ դիւրութիւններէն օտարներուն պէս, մանաւանդ հրեաներու նման:

Օրն ուրեմն հայ մայրեր ու մեծ մայրեր: Արժեցնենք «Մայրերու Օր»ը մեր զաւակներուն ապագային համար: Քիչ մը պակսեցնենք մեր ալլեւալլ ծախսերը եւ մեր զաւակներուն ապագան կերտենք: Մեր զաւակներուն «ներքին թշնամիները» չ'ըլլանք ինչպէս ըսաւ փիլիսոփան, լսենք Գարեգին Բ. Կաթողիկոսի «Մայրերու Օր»ուայ ուղերձը, թող մեր զաւակները հպարտ ըլլան հայերէն ալ խօսելով եւ թող կրկնեն ասացուածքի վերածուած բանաստեղծին խօսքը. «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»:

## ԱԻՆՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

Այսօր արդէն հասել եմ իմ կեանքի 88-րդ սեմին: Իմ բոլոր հասակակիցները ապրում են իրենց անցեալի քաղցր եւ երբեմն էլ դառն յուշերով: Պատմում են իրենց կեանքում տեղի ունեցած անց ու դարձերի, յուշերի եւ երեւոյթների մասին: Երկար տարիներ ապրելով իմ ծննդավայր Քալաւա գիւղում, ես բացի հողագործութեամբ զբաղուելուց, մասնակցել եմ հասարակական բնօրէյ կրող աշխատանքներին, անդամակցել եմ եկեղեցա-դպրոցական մարմիններին եւ երկար տարիներ ստանձնել եմ գիւղապետի ծանր ու դժուարին պաշտօնը: Միշտ եղել եմ արդարադատ եւ պաշտպանել եմ իմ բոլոր հայ եւ պարսիկ համագործակցիների շահերը: Այդ պատճառով թէ պետական շրջանակներում եւ թէ հասարակութեան մէջ, ձեռք եմ բերել բարի համբաւ: 1955-56 թուականներից հաստատուեցի Թեհրան եւ յաջողեցի ստանալ մեքենավարութեան առաջին կարգի վկայական: Ապա ընտրեցի մեքենայ վարելու ասպարէզը եւ 18 անիւ ունեցող հսկայ մեքենայով շրջեցի ամբողջ Եւրոպան, փոխադրելով զանազան ապրանքներ, որոնք պատկանում էին իրանցի վաճառականներին: Պարսիկ ժողովուրդը ընդհանրապէս խորին յարգանք եւ վստահութիւն է ունեցել եւ ունի մասնաւորապէս հայ փոքրամասնութեան նկատմամբ:

Այդ կապակցութեամբ բազմաթիւ փաստեր կան: Իսկ իմ կեանքում նման երեւոյթների ես շատ եմ հանդիպել: Բեռնատար մեքենայ վարելու տարիներին, ես բնականաբար միշտ գործ ունէի պարսիկ վաճառականների հետ: Մէկ անգամ Թեհրանում գնացի կենտրոնական շուկայ մի պարսիկ առետրականից ստանալու բեռնափոխադրման վարձը: Սովորական խօսակցութիւններից յետոյ վաճառականը ինձ տուեց 42 հազար թումանի մէջ չէք, նոր այն օրերի հաշուով շատ խոշոր գումար էր: Շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, դուրս գալով, գնացի մօտակայ դրամատունը, ստանալու համար չէքի գումարը: Երկար ժամանակ սպասելուց յետոյ, երբ հեթըր ինձ հասաւ, պաշտօնէան ինձանից պահանջեց ինքնութեան թուղթ, կամ վարորդական վկայական: Դժբախտաբար ես ոչ մի փաստաթուղթ չունէի ինձ մօտ, եւ այդ պատճառով պաշտօնէան հրաժարուեց չէքը վճարել: Մտածեցի գնալ տուն եւ վերցնել ինքնութեան թուղթը: Այդ պահին պաշտօնէային մօտեցաւ այդ բաժնի պատասխանատունը: Նա իմա-

նալով եղելութիւնը եւ կարգալով չէքի վրայ նշուած իմ անուն ազգանունը, ասաց պաշտօնէային - Սա հայ մարդ է, սուտ չի խօսի, վճարիր: Գումարն ստանալով գոհ եւ ոգեւորուած ես վերադարձայ տուն: Ուսիս էի որ հայութիւնը այս հիւրընկալ երկրում վայելում է յարգանք եւ վստահութիւն:

Այսօր էլ իսլամական յեղափոխութիւնից յետոյ, իրանահայերը վայելում են իրանի պետութեան եւ ժողովրդի սէրն ու համակրանքը: Ազատ եւ անկաշկանդ աշխատում են մեր բազմաթիւ եկեղեցիները, դպրոցները, միութիւնները, մարզադաշտերը եւ ակումբները: Բոլոր ազգային եւ կրօնական տօները նշում ենք ըստ պատշաճի, առանց որեւէ դժուարութեան եւ բարդութիւնների: Տարիներ առաջ տղաս մի թեթեւ գործողութիւն ունեցաւ, Թեհրանի յայտնի «Ջամ» հիւանդանոցում: Եօթ-ութ օր անց որդիս լրիւ առողջացաւ եւ դուրս գրուեց հիւանդանոցից: Հաշուեցոյցը վճարելու համար ես դիմեցի հաշուապահական բաժնին: Այդտեղ ինձ յայտնեցին որ պատասխանատու պաշտօնէան երկու ժամ յետոյ պիտի գայ: Ուրեմն ես 2 ժամ պիտի սպասեմ: Տղաս որ նոր էր վերագտել իր առողջութիւնը շատ անհանգստացած էր: Ի՞նչ պիտի անել: Առանց վճարման մեզ չպիտի թողնէ տալիս դուրս գալ հիւանդանոցից: Իսկ 2 ժամ սպասել շատ ծանր էր թէ ինձ եւ թէ յատկապէս տղայիս համար: Ի՞նչ անել, չգիտէի: Յանկարծ բաժնի պաշտօնէան մօտեցաւ ինձ եւ ասաց - Պարոն, ձեր հիւանդին կարող էք տանել, իսկ վճարումը կը մնայ վաղուան: Ուղղակի շքեղ էի եւ զարմանում էի եւ չէի կարողանում հասկանալ թէ ի՞նչ է կատարում: Վերջապէս առանց հիւանդանոցի ծախսերը վճարելու տղայիս հետ հասանք տուն: Մտածում էի եթէ չզնայեմ եւ այդ գումարը չվճարեմ, ինչպէ՞ս պիտի գտնեն ինձ, քանի որ ոչ մի ծանօթութիւն չունեն իմ մասին: Յաջողօր օրը դիմեցի հիւանդանոցի հաշուապահական բաժնին եւ ասացի. - Եկել եմ պարտքս վճարելու - պաշտօնէան ուրախացած նայեց ինձ եւ ասաց. - Հայրենակից գիտես ինչու առանց վճարում կատարելու քեզ տուն ուղարկեցինք: Որովհետեւ տղայիդ հետ հայերէն խօսեցիր, որից իմացանք որ հայ ես: Եթէ դու այս գումարը չբերէիր, մեր գանձապահը ինքը պիտի վճարէր եւ նկատողութեան արժանանար: Ահա այսպիսին էր իրանահայութեան վիճակը երէկ, եւ այսպիսին է նաեւ այսօր...

**ԱՐՄԵՆՈՒԿԻ ԲՈՅԱՄԵԱՆ ԻՍ ՄԱՅՐԻԿԻՍ (ՄԱՆԿԱԿԱՆ)**

Բնութեան ստեղծած մի հրաշք է իմ մայրիկը սիրելի Եթէ կ'ուզէք ես ձեզ պատմեմ, Որքան լաւն է ու բարի:

Ուզում եմ ես անկեղծ լինել Ասել խօսքը իմ սրտի, Որ սիրում եմ իմ մայրիկիս Չափից-չափից աւելի:

Միշտ ինձ համար գրքեր կարդում Դեքիաք պատմում անուշիկ, Որ լաւ քնի իր բալիկը Աշխարհում իր երագի:

Կ'ուզեմ որ նա չ'ծերանայ Մնայ միշտ թարմ, գեղեցիկ,

Եւ իր բարի լայն ժպիտով ժպտայ անկեղծ բոլորին:

Կ'ուզեմ նաեւ որ կեանքում իմ մայրիկը չտխրի, Նրա սիրուն աչքերում ես չտեսնեմ արտասուք:

Հիմա արդէն հերթը իմն է Դամբուրել այդ ձեռքերը, Որ երգել է, ինձ պարուրել Ու չի քնել ողջ գիշեր:

Ցանկանում եմ ուժ ու կորով իմ անցման մայրիկիս, Արժանի է ամէն ինչի Եւ շատ ու շատ յարգանքի:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

**Մեծ ժողովրդականութիւն Վայելող Կլէնտելի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast**

**Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի Ամբողջ Տարածքին**

**Դուք Կրնաք Դիտել Հայաստանեան Լուրեր Գաղափարական Վերլուծութիւններ Երաժշտական Հաղորդումներ Եւ այլն Մանրամասնութիւններու Համար Հեռաձայնել 818.547.9696**



### ՎԱՆԴՊՈՒՄՆԵՐ... ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՏ

Շաբաթը անկուած էջ 14-էն

ուրիշ կերպով կ'ընկերակցուի իր շարժումները: Վարուժան կը պատահանէ թէ իր յարգանքը լիբանանեան պատուիրակութեան հանդէպ, անոր կազմին մէջ հայազգի երեսփոխանի մը ներկայութեամբ պայմանաւորուած չէ: Աշխարհի բոլոր հայերը, Հայաստանէն ետք իրենց երկրորդ հայրենիքը կ'ընդունին Լիբանանը եւ ինք ինչպէս ունէ հայ, մեծ սէր ունի այդ երկրին հանդէպ: Վարուժանին այս պատահանը մեծապէս գոհացուց գիտեալ եւ հարցուցի թէ այս երկխօսութիւնը կրնա՞յ նաեւ Նեպի՛հ Պըրրիին պատմել: Անպատեհութիւն մը չգտաւ: Նեպի՛հ Պըրրիի մէկ ազատ պահուն մօտեցայ իրեն եւ ըսի թէ հայ երեսփոխանը կը փափաքի շատ կարճ տեսակցութիւն մը ունենալ հետը եւ ըսելիք մը ունի: Սիրով ընդառնեց: Վարուժան փամպուքեան վերոյիշեալ երկխօսութիւնը նոյնութեամբ պատմեց Նեպի՛հ Պըրրիին: Նեպի՛հ Պըրրիի գոհու-

նակութիւնը ակներեւ էր (վերադարձի ճամբուն վրայ, օդանաւին մէջ, ան այս խօսակցութիւնը պատմեց պատուիրակութեան միւս անդամներուն): Պըրրիի հետաքրքրուեցաւ ուսմանահայրութեամբ: Իրեն համար նորութիւն էր որ հայ գաղութը կազմուած չէ նախկին լիբանանահայերէ, այլ այդ կազմուած է նոյնիսկ Մեծ Եղեռնէն առաջ, Թուրքիայէն արտագաղթած հանրէ: Սա պատճառ եղաւ որ խօսակցութիւնը ընթանայ դէպի Յեղասպանութիւն, հայութեան վիճակը Օսմանեան կայսրութեան մէջ նախքան Յեղասպանութիւնը, եւ այլն: Վարուժանը մէկ կողմէ, ես միւս կողմէ կը բաւարարէինք Նեպի՛հ Պըրրիի հարցերուն: «Կարճ պահու» մը համար նախատեսուած հանդիպումը տեւեց բաւական երկար: Երբ դուրս եկանք Պըրրիի առանձնասենեակէն, ես թեթեւութիւն մը կը զգայի: Վստահ եմ որ նոյնը կը զգար նաեւ Վարուժան, որովհետեւ սկսած էր աստիճաններէն երկու-երկու իջնել...:

### «ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ»

Շաբաթը անկուած էջ 14-էն

կը նշմարուի (բռնագաղթի կազմակերպման համար. «Ե.Ճ.»): Սա ցոյց կու տայ որ 1915-ին եւ անկէ առաջ հայերու դէմ բռնագաղթի որեւէ ծրագիր չէ եղած»: Այս պարբերութեամբ, ալ հեղինակը ամբողջապէս կը ծխտէ բռնագաղթին պետականօրէն ծրագրուած ըլլալը: Հեղինակը կը գտնէ, որ ամբողջ հայութիւնը չէ որ բռնագաղթի ենթարկուեցաւ, այլ «մաս մը միայն»: Ապա, կը պնդէ, որ 1919-1921-ի միջոցին 350 հազար հայերու «արտօնուեցաւ» վերադառնալ Անատոլիա: Եթէ ընդունին, որ

բռնագաղթած «մաս մը հայերը», առաւելագոյնը ընդհանուր հայութեան կէսն էր, եւ դարձեալ ընդունինք որ անոնք բոլորն ալ, անխտիր ետ վերադարձան, ապա 1921-ի դրութեամբ 1921-ին Անատոլիոյ հայութեան թիւ 700,000 պէտք է ըլլայ, որ 85 տարի ետք, բնական աճով, պէտք է անցնի 1 միլիոնի սահմանը: Ո՞ւր է այդ հայութիւնը Անատոլիոյ մէջ...: «Հայկական Հարցը եւ Իրականութիւնները» գրքովը կարելի է ընդունիլ որպէս թրքական հակահայ քարոզչութեան դասական մէկ օրինակը»: Ե. Ճ.

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵՆԵՆ

Շաբաթը անկուած էջ 8-էն

Բիւզանդիոնի Կոստանդին կայսրը գահ բարձրացաւ 10-րդ դարուն ու իր քաղաքական գործին աւելցնելով այն բացառիկներէն մին ըլլալով գրեց մի քանի կարեւոր քաղաքական եւ կայսերական թեմերու վերաբերեալ գիրքեր: Անոնցմէ մին է որ ներկայ գիրքին նիւթ կազմած է ուր ան կը գրէ որոշ մանրամասնութեամբ Հայ Բագրատունեաց թագաւորութեան մասին որ դարացի պետութիւնն էր այն ատեն կայսրութեան արեւելեան նահանգներուն իր Անի մայրաքաղաքով եւ մեծանուն հայ թագաւորներու օրով:

**ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑ-ԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ**  
Անգլերէն լեզուով գրուած այս ամփոփ գիրքը «Ժողովուրդին համար» գրուած աւելի պարզ բացատրութիւններով Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը կը ներկայացնէ կարճ գլուխներու ներքեւ: Հոն շարքով նկատի առնուած են Ս. Գիրքի կենսական հիմքը, եկեղեցւոյ առաջին երեք Տիեզերական Ժողովներու առած որոշումները եւ Նիիկիոյ Հաւատոյ Հանգանակը:  
Քննուած են նախ Պօղոս Առաքելայի անփոխանելի վերլուծումներն ու աստուածաբանութիւնը, եւ ապա Գրիգոր Տաթեւացիի եւ Ներսէս Շնորհալիի հաւատոյ հանգա-

նակները որոնց հիմամբ վերահաստատուած են Քրիստոսի Անձին վարդապետութիւնը, Ս. Երրորդութեան վարդապետութիւնը, Ս. Աստուածածնի հանգամանքն ու դերը, եւ այլ յարակից խնդիրներ, բոլորն ալ աւետարանական տուեալներու վրայ: Գիրքը բնականաբար կ'ընդգրկէ Եկեղեցւոյ սրբազան Խորհուրդները առանձինն, Հայ Եկեղեցւոյ շարականներու աստուածաբանութիւնը, Եկեղեցւոյ ստորոգելիները, այսինքն անոր տրուած սուրբ եւ նուիրական ածականները, ինչպէս նաեւ անդրադարձ մը կատարուած է անաստուածութեան եւ հերետիկոսութեան հոսանքներուն վրայ, այդ ուղղութեամբ տալով քրիստոնէական եւ աւետարանական բնորոշ եւ համոզիչ մեկնաբանութիւններ:  
Վերեւ յիշուած բոլոր հրատարակութեանց մեկնասաներն են Տ. եւ Տիկ. Տէյլիտ եւ Մարկրիթ Մկրպլեան որոնց հրապարակաւ իր շնորհակալութիւնը կը յայտնէ գիրքերուն հեղինակը:  
Այս առիթով սրտագին հրաւեր կը կարգանք շրջանիս բոլոր գրասէր եւ եկեղեցասէր հասարակութեան ներկայ ըլլալ Շնորհանդէսին որ տեղի պիտի ունենայ Պըրպէնքի Հայոց Առաջնորդարանի դահլիճին մէջ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ՄԱՅԻՍ 21-ին, երեկոյեան ժամը 7-ին:  
Հիւրասիրութիւն շնորհանդէսէն ետք: Կը հրաւիրենք բոլորը:

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ՝**  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԾ ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵՂՈՆԻ ԿՈՂՄԵ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒ ՈՒՂԻՂ ԱԽՈՒ ԻՏԵՂԱՐԾԱԿՈՒԻ ԻՆՔՐԸՆԵՐՈՎ

Միշիկընի Համալսարանի (Անն Արպըր) Հայագիտական Ուսումնասիրութիւններու Ծրագիրը պատիւ ունի յայտարարելու «Վրաստան. Երկրի կառուցումը» թեմայով միջազգային գիտաժողովի գումարման մասին, որը տեղի կ'ունենայ Միշիկընի Համալսարանի Միջազգային Ինսթիթիւտին մէջ, 2008 թ. Մայիս 15-18ը:

Վրաստանէն, Հայաստանէն, Ռուսաստանէն, Թուրքիայէն, Ճափոնէն, Գանատայէն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն աւելի քան 30 մասնագէտներ հրաւիրուած են մասնակցելու այդ գիտաժողովին: Գիտաժողովի համար նախատեսուած նիւթերէն են. «Քրիստոնէայ Վրաստան. Մշակոյթն ու ինքնութիւնը միջնադարում եւ վաղ նորօրեայ շրջանի մէջ», «Ժամանակակից վրացական ազգայնականութեան ծագումը», «Տարբերութիւններ եւ միասնութիւն Հարաւային Կովկասին մէջ». Բանավէճեր մասնատման շուրջ», «Հայերն ու վրաստանը», «Զարգացումը եւ յեղափոխութիւնը վրաստանի քաղաքական կեանքին մէջ» եւ «Ներկայ պահին մարտահրաւէրները. վրաստանը կլոպալիզացուող աշխարհին մէջ»:

Ծրագրի մանրամասնութեան եւ ժամանակացոյցին կրնաք ծանօթանալ Հայագիտական Ուսումնասիրութեանց Ծրագրի Ինթըրնետային կայքէջն՝ <http://www.ii.umich.edu/ASP>:

Գիտաժողովը մաս կը կազմէ «Հայաստանն ու իր հարեւանները» շարքին եւ բաց է հանրութեան համար: Հաւասարապէս կարելոր է այն հանգամանքը, որ գիտաժողովին ընթացքն ուղիղ պէտք է հեռարձակուի Ինթըրնետով: Անոնք որոնք հետաքրքրուած են, ներկայացուող գեկոյցներուն եւ քննարկումներուն կրնան հետեւիլ հետեւեալ կայքի հասցեով. <http://umtv-live.rs.itd.umich.edu/asp/asp052008.asx> (Միշիկընը, Նիւ Եորքին պէս, կը գտնուի ԱՄՆ-ի արեւելեան ժամային գօտիին վրայ):

Գիտաժողովի գլխաւոր կազմակերպիչն է Պրոֆեսոր Ռոնալդ Սիւնին: «Նկատի ունենալով Հարաւային Կովկասի եւ մասնաւորապէս Վրաստանի աճող կարեւորութիւնը միջազգային հանրութեան համար, կը կարծենք, որ այս հաւաքը հիմնաքար մը կը դառնայ, որը ոչ միայն մեր յարաբերութիւնը կարեւորապէս կ'արեւելցնէ, այլ նաեւ ի մի կը բերէ աշխարհի զանազան երկրներու գիտաշխատողները, որոնք իրենց ժամանակն ու եռանդն են նուիրաբերած այդ երկիրը հասկնալու գործին», - կ'ըսէ Պրոֆ. Սիւնին՝ յաւելելով. - «Հայաստանի տեսակէտէն նայելով, անհրաժեշտ է, որ բոլոր հարեւանները ամենէն առաջ իրենց իսկ երկրներու համաթեքսթին մէջ հասկցուին»:

Գիտաժողովի համահովանաւորներն են Միշիկընի Համալսարանի Պատմութեան Բաժանմունքը, Ռաքհամ Աւարտական Կեդրոնը, Միջազգային Ինսթիթիւտը, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի Հարցերու Ուսումնասիրութեանց Կեդրոնը, Միշիկընի Համալսարանի Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկէի Հարցերու Ուսումնասիրութեանց Կեդրոնը եւ Շիքակոյի Համալսարանին մէջ հաստատուած Հարաւային Կովկասի Հարցերու Հետազոտութեան Ամերիկեան Ինսթիթիւտը (ARISC)

**Հայ Ինֆուքեան Հունձի Armenian Identity Harvest**

**Վիքթորի Հանրապարտիսին Մէջ At Victory Park**

**Եկէ՛ք ու Յայտնաբերեցէ՛ք Ձեր Ինքնութիւնը**  
Come and Discover Your Identity!

Կիրակի, Յունիս 1, 2008  
Sunday, June 1, 2008

Food - ճաշ  
Youth Activities - Երիտասարդաց Կէտքէ Կողմ Ժամը 1-8  
Motorsports - Մեքենայան Բնամարտի Գոյց  
Games - Իսպիւր  
Arts and Crafts - Չեղարկի աշխատանք  
Live Music - Երաժշտութիւն

Victory Park  
2575 Paloma St.  
Pasadena, CA 91107  
1 PM - 8 PM

**Մուտքը Ազատ**  
For more information call:  
626•399•1799

**ՄԱՐԶԱԿԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏԸ» ՄԻԱՆՁՆԵԱՅ ԱՌԱՋԱՏԱՐ**

Ֆուտբոլի Հայաստանի առաջնությունից 4-րդ տուրում Երեւանի «Արարատը» հերթական յաղթանակը տոնեց՝ դառնալով միանձնեայ առաջատար: Վարուժան Սուքիասեանի սաները Գրիմրիում հիւրընկալուել էին «Շիրակին», որը նախորդ 2 տուրերում յաղթել էր «Գանձասարին» եւ «Փիւնիկին»: Սակայն «Արարատը» Արթուր Պետրոսեանի եւ Պիզելի Մարկոսի խփած գոլերի շնորհիւ 2:0 հաշուով առաւելութեան հասաւ «Շիրակի» նկատմամբ: Այսպիսով «Արարատը» անցկացրած 4 հանդիպումներում նոյնքան յաղթանակ է տօնել եւ 12 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը: Բացի այդ արարատցիները ոչ մի զնդակ դեռ չեն ընդունել, փոխարէնը մրցակիցների դարպասը 10 զնդակ են ուղարկել:



Իր առաջին յաղթանակը տօնեց Երեւանի «Բանանցը», որը սեփական յարկի տակ մրցեց «Ուլիսի» հետ: Հանդիպման վերջին րոպէին Արսէն Բալաբեկեանի խփած կոլի շնորհիւ փոխախոյնանը իր միաւորների քանակը հասցրեց 4-ի: Առաջին յաղթանակը տօնեց նաեւ Կապանի «Գանձասարը», որը 2:1 հաշուով առաւելութեան հասաւ ետնապահ «Կիլիկիային» նկատմամբ:

Այս տուրի «Փիւնիկ» - «Միկա» կենտրոնական հանդիպումը անորոշ ժամանակով յետաձգուել է, քանի որ «Փիւնիկի» միանգամից 11 ֆուտբոլիստներ Հայաստանի մինչեւ 19 տարեկանների հաւաքականի կազմում մեկնել են Իտալիա մասնակցելու ուսումնամարզական հաւաքի:

«Շիրակ» - «Արարատ»	0-2
«Բանանց» - «Ուլիս»	1-0
«Գանձասար» - «Կիլիկիա»	2-1

4 փուլից յետոյ 12 միաւորով առաջատար է «Արարատը»

	Խաղ	Ցաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	4	4	0	0	10-0	12
«Միկա» Աշտարակ	3	3	0	0	9-2	9
«Շիրակ» Գրիմրի	4	2	0	2	5-6	6
«Փիւնիկ» Երեւան	3	2	0	1	2-2	6
«Ուլիս» Երեւան	4	1	0	3	3-4	3
«Գանձասար» Կապան	4	1	1	2	3-5	4
«Բանանց» Երեւան	4	1	1	2	1-2	4
«Կիլիկիա» Երեւան	3	0	0	3	0-11	0

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԱՂԹԵՑ ԻՏԱԼԱՅԻՆԵՐԻՆ**

Հայաստանի մինչեւ 19-տարեկանների հաւաքականն իր առաջին ընկերական հանդիպումն անցկացրեց Իտալիայի միջազգային ընկերական մրցաշարի շրջանակներում: Առաջին մրցակիցն Իտալիան «Մոնցա» ակումբի 19-տարեկանների թիմն էր: Մեր ընտրանին տարաւ յաղթանակ 4:1 հաշուով: Հայաստանի հաւաքականի կազմում կոլերի հեղինակներ դարձան Տիգրան Ոսկանեանը (18), Էդգար Մալաքեանը (32), Լեւոն Հայրապետեանը (63) եւ Հայկ Չիլինգարեանը (86-11մ):

Հայաստանի հաւաքականն իր 2-րդ հանդիպումն անցկացրեց Իտալիան Բ Սերիան ներկայացնող «Վիչենցա» ակումբի մինչեւ 19 տարեկանների թիմի հետ: Արմէն Գիւլբուրգադեանցի սաները դարձեալ տարան վստահ յաղթանակ՝ նոյն 4:1 հաշուով:

Հայաստանի ընտրանու կազմում աչքի ընկան Միհրան Մանասեանը (4), Հենրիխ Միլիթարեանը (56), Նորայր Գիւրգալեանն (81) ու Էդգար Մալաքեանը (84):

Մայիսի 10-ին Հայաստանը կը մրցի արդէն Իտալիան հեղինակաւոր «Եռվենտուս» ակումբի մինչեւ 19 տարեկանների թիմի հետ:

Յիշեցնենք, որ Մայիսի 22-ից 27-ը Հայաստանում տեղի կ'ունենայ մինչեւ 19 տարեկան հաւաքականների Եւրոպայի առաջնութեան ելիտ ուսուցիչի եօթերորդ խմբի մրցաշարը, որտեղ մեր ընտրանին կը մրցի Սպանիայի, Թուրքիայի եւ Ուկրաինայի հաւաքականների հետ: Ըստ ՌԻՖՑԱ-ի պաշտօնական կայքի հանդիպումները կայանալու են Աբովեանում եւ Աշտարակում, սակայն ամենայն հաւանականութեամբ Աշտարակի փոխարէն թիմերը հանդէս կը գան «Միկայի» մարզաբազայում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ 4 ՍԱՄԲԻՍՏԵՐ ԴԱՐՁԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ**

Ապրիլի 30-ին Թբիլիսիում աւարտուեց Եւրոպայի սամբոյի առաջնութիւնը, որին Հայաստանից մասնակցեցին 12 մարզիկ-մարզուհիներ:

Իր քաջային կարգում Աշոտ Դանիէլեանը (74 կգ) գրաւեց 2-րդ տեղը, իսկ Յակոբ Առաքելեանը (90 կգ), Արեն Մեհրաբեանը (68կգ) եւ Ռուզան Սարգսեանը (52կգ) կանգնեցին պատուոյ 3-րդ տեղը:

**ԱՊԱՔԻՆՈՒՄ**

ՄԱՐԱԼ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ վերաբուժական յաջող գործողութեան ենթարկուելու ուրախ առիթով, Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Անի Գասպարեաններ շուտափոյթ ապաքինում կը մաղթեն Մարալ Գալուստեանին եւ առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին:

**ԵՒՐՈՊԱՅԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ԱՐԾԱԹԵ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ**

Բուլկարիայի Պլովդիւմ քաղաքում աւարտուեց ճատրակի Եւրոպայի անհաստական առաջնութիւնը, որտեղ Հայաստանի ներկայացուցիչներին 2-րդ տարին անընդմէջ չյաջողուեց մրցանակային տեղ գրաւել:

Տղամարդկանց պայքարում Վլադիմիր Յակոբեանը վերջին տուրում սեւերով ոչ-ոքի խաղաց ատրպէյճանցի Ռաուֆ Մամեդովի հետ եւ 7.5 միաւորով բաւարարուեց միայն 19-րդ հորիզոնականով, իսկ յաղթանակի դէպքում հայ գրոսմայստերը հնարաւորութիւն կը ստանար պայքարել արծաթէ եւ բրոնզէ մեդալների համար: Ախոյեանի կոչումը 8.5 միաւորով նուաճեց Սերգեյ Տիվիակովը, Սերգեյ Մովսիսեանը (Սլովակիա) դարձաւ արծաթէ մրցանակակիր Բրոնզէ մեդալը բաժին հասաւ Սերգեյ Վոլկովին: Գաբրիէլ Սարգսեանը վերջին տուրում սպիտակներով առաւելութեան հասնելով Իգոր Կուրնոսովի նկատմամբ 7.5 միաւորով հանգրուանեց 28-րդ տեղում: Բաւական յաջող հանդէս եկաւ պատանի Սամուէլ Տէր-Սահակեանը, որը առաջին անգամ մասնակցելով նման խոշոր մրցաշարի վաստակեց 7 միաւոր: Սամուէլը ապացուցեց, որ Յունուարին պատահական չէր Հայաստանի առաջնութիւնում մրցանակային տեղ գրաւել եւ լրացրել գրոսմայստերի նորմա: Մեր միւս ներկայացուցիչները աւելի ցածր հորիզոնականներ գբաղեցրին, իսկ Դմիտրի Յարութիւնեանը 2.5 միաւորով յայտնուեց 316-րդ տեղում:

Կանանց պայքարում Էլլինա Դանիէլեանը յաջող մեկնարկից յետոյ վերջին տուրերում անյաշող հանդէս եկաւ եւ 7.5 միաւորով գրաւեց 13-րդ հորիզոնականը: 8.5 միաւորով առաջին հորիզոնականը գբաղեցրեց Կատերինա Լահնոն:

**ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Պաքեթպոլի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց նոր մեկնարկած առաջնութիւններում աստիճանաբար ընդգծուեւ են առաջատարները:

Տղամարդկանց պայքարում բաւական յաջող է հանդէս գալիս «Պոլիտեխնիկը», որը նախ 75:51 հաշուով առաւելութեան հասաւ ՖիՄԱ-ի նկատմամբ, ապա 57:40 հաշուով յաղթեց «Արցախին», 61:53 հաշուով՝ «Գիւմրիին»: Այնուհետեւ «Պոլիտեխնիկը» մրցեց «Արաբիկի - ՖիՄԱ»-ի հետ, որը եւս մինչ այս միաւորներ չէր կորցրել: Լարուած այս մրցապէճում ի վերջոյ յաղթեց անհամեմատ փորձառու «Պոլիտեխնիկը»՝ մրցակցին պարտութեան մատնելով 94:88 հաշուով:

Կանանց պայքարում այս տարի եւս պայքարը ընթանում է «Գրանդ Քենդիի» եւ ԳՄԻ-ի միջեւ: ԳՄԻ-ին, որը ներկայացնում է Գիւմրիի մանկավարժական ինստիտուտը, նախորդ առաջնութեան յաղթողն է: Առաջին շրջանի կենտրոնական խաղում «Գրանդ Քենդին» մեծ դժուարութեամբ 63:57 հաշուով առաւելութեան հասաւ ԳՄԻ-ի նկատմամբ եւ դարձաւ միանձնեայ առաջատար: Կանանց պայքարում անյաջող է հանդէս գալիս «Աջեռան», որը պարտուել է բոլոր 4 հանդիպումներում:

**ՓԵՔԻՆ-2008**

ԱՁԱՏ ՈՃԻ ԸՄԲԻՇ ՄԱՐՏԻՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԸ ՆՈՒԱՃԵՑ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Ազատ ոճի ըմբիշներն աւարտեցին վարկանիշային մրցումները: Վերջինն անցկացուեց վարչապետի: Յաջող հանդէս եկաւ Եւրոպայի նախկին ախոյեան, 60 կգ քաշային Մարտին Պէրպէրեանը՝ նուաճելով օլիմպիական ուղեգիր: Այսպիսով, Հայաստանի օլիմպիականների թիւը հասաւ 16-ի: Ազատ ոճի ըմբիշները նուաճել են օլիմպիական երեք ուղեգիր: Նշենք, որ ուղեգրերը անուանական չեն, այլ տուեալ քաշի համար են: Այնպէս որ միայն հաւաքականի մարզիչները պէտք է վերջնականապէս որոշեն, թէ տուեալ քաշային կարգում որ մարզիչին է Հայաստանը ներկայացնելու փեքինում:



**ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ**  
**ՇԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**  
**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ**  
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**  
**(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ԲՐԵՍԵՆՈԱ)**  
**GLOBACAST SATELLITE**  
 ԳԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

**ՔԱԶ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
 Ամէն Կիրակի երեկոյեան  
 Ժամը 10:00-ից 12:30  
 Կլէնտոյլի 280-րդ կայանից





AGBU



LARK MUSICAL SOCIETY

# Zemiré

Չ Է Մ Ի Բ Է



A New Production by  
AGBU ARDAVAZT THEATER COMPANY  
AND  
LARK MUSICAL SOCIETY

Dikran Tchouhadjian

## ZEMIRÉ

*Opera Semiseria in Four Acts*

Stage Director:  
**KRIKOR SATAMIAN**

Music Director:  
**VATSCHÉ BARSOUMIAN**

A large cast of singers, actors, chorus,  
orchestra and supernumeraries.

Friday  
May 30, 2008, 8:00 pm  
Saturday  
May 31, 2008, 8:00 pm  
Sunday  
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium  
300 East Green Street  
Pasadena, CA

